

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՀԱՅ ՆԵՍՆՈՆ ՄԱՆՏԵԼԱ ՍԸ ՊԻՏԻ ԾՆԻ՞...

ՏՕԲԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ընթացիկ տարուան Դեկտեմբերի 5-ին իր մահկանացուն կնքեց Հարապային Ափրիկեի ծնունդ՝ անգուցական Նելսոն Մանտելան: Մանտելան իր ունեցած մարդասիրական, ընկերային և քաղաքական քարոզիչական արժանիքներուն համար, աշխարհով մէկ սիրուած յարգուած ու գնահատուած անձնաւորութիւն մը ընդունուած էր, որ իր քաղաքական սկզբունքներու անտեղիտալի նկրտումներուն, անգամ իր ընդդիմադիր ներափրիկեան և երոպական պետական առաջնակարգ դէմքերու կողմէ իսկ նանչուած էր իբրև համակ հայրենասէր, անբասիր մարդասէր ու խիզախ ազատամարտիկ:

Նելսոն Մանտելայի օրինակելի մարդասիրական, ընկերային, քաղաքական, հայրենասէր, խաղաղասէր և անխտրական ոգիի տէր անձնաւորութիւնը, իր կեանքի բովանդակ տեսչութեան՝ արժանացած էր անի բան 250 պարգևատրումներու, որոնց շարքին «Նոպելեան Մրցանակ» ի խաղաղութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու «Նախագահական Ազատութեան Ծանշան»-ին և Սովետական Միութեան՝ «Լենինեան Մրցանակ»-ին, որոնք կուգան արժանաւորապէս հաստատելու անոր ունեցած տիպար մարդու և քաղաքացիի քացառիկ արժանիքները, գորս, անխտրականօրէն ի սպաս դրած էր իր հայրենի՝ հարապային Ափրիկեի և համայն ստրկացուած ժողովուրդներու ազատագրական քարոզական գուպարին, անով ապացուցելու համար, որ ժողովուրդներու միջև մոտոնող ատելական տրամադրութիւններն ու կործանարար պատերազմները լուծուի՛ն ան աշխարհի խաղաղութեան հաստատման:

Այդ պարգևատրումները կուգան արժանաւորապէս հաստատելու իր այն համոզումը, թէ միայն բանակցային յարաբերութիւններն են նշմարիտ ձևեր ու ուղիներ ցեղերու միջև գոյութիւն ունեցող ցեղապաշտական խտրական կարգավիճակներու վերացման: Մանտելան, իր կեանքի օրինակով ցոյց տուաւ ապացոյցը: Այդ նամբուն՝ անի բան 27 տարի բանտարկութեան դատապարտուած Մանտելան, միջազգային նշումներու շնորհիւ, 1990-թուին ազատ արձակուելէ անմիջապէս ետք, բանակցային նախապայտակ հասկացողութեան եկաւ հարապային Ափրիկեի նախագահ սպիտակամորթ Տր Գլէրի հետ, մի անգամ ընդմիջու յաջողապէս վերացնելու համար ցեղային խտրականութիւնը:

Շաբ.ը էջ 18

## Մինչ Ֆրանսա Կը Պատրաստուի Կրկին քննարկելու Ցեղասպանութեան Ժխտումը Քրեականացնող Օրինագիծը Երոպական Դատարանը Հակառակ Որոշում Կայացուց

Ըստ ֆրանսական «Լը Մոնտ» օրաթերթին, յառաջիկայ ամիսներուն ֆրանսական կառավարութիւնը խորհրդարան պիտի ներկայացնէ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող նոր օրինագիծ մը:

2011-ի Դեկտեմբերին Ֆրանսայի Ազգային Ժողովը քուէարկութեամբ հաստատած էր ցեղասպանութիւններու, որոնց շարքին Հայոց ցեղասպանութեան, ժխտման համար քրեական պատասխանատուութիւն սահմանող օրինագիծ մը, սակայն երկրի Սահմանադրական խորհուրդը չէր հաստատած զայն:

«Լը Մոնտ» կը յիշեցնէ, որ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնելը նախագահ Ֆրանսուա Օլանտի նախընտրական խոստումներէն մէկն էր: Թերթը կ'աւելցնէ որ, դիւանագիտական նկատառումներէ ելլելով որեւէ պաշտօնական յայտարարութիւն այս կապակցութեամբ պիտի չկատարուի, մինչեւ գալիք տարուայ Յունուարի վերջերուն Ֆրանսայի նախագահի՝ Թուրքիա կատարելիք այցը: Այդ մասին պաշտօնապէս կը յայտարարուի չորս ամիս յետոյ՝ Ֆրանսուա Օլանտի հայաստան կատարելիք այցելութեան ժամանակ:



մանակ: «Լը Մոնտ» համաձայն, նման ժամանակացոյցը թույլ կուտայ որ, օրինագիծը հաստատուի Հայոց ցեղասպանութեան հարկւրամեակի տարելիցի նախաշնչին: Ֆրանսական հեղինակաւոր թերթի այս հարցորդմէն մի քանի ժամ ետք, Դեկտեմբեր 17-ի երեկոյեան յայտնի դարձաւ, որ Մարդու իրաւունքներու Երոպական Դատարանը արդարացուցած է

թուրք քաղաքական գործիչ, Բանուորական կուսակցութեան ղեկավար Տողու Փերինչէքին, որուն Չուրիցերիական դատարանը 2007 թուականին մեղաւոր ճանչցած էր՝ Հայոց ցեղասպանութիւնը ժխտելու մէջ եւ 12 հազար գուրցերիական ֆրանքով տուգանելու որոշում կայացուցած էր:

Շաբ.ը էջ 4

## ՄԴՀԿ Համախմբուելու Կոչ Կ'ընէ Հայաստանի Քաղաքական Չախ Ուժերուն

ՄԴՀԿ Հայաստանի վարչութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ՝ կոչ ընելով բոլոր քաղաքական ձախ ուժերուն համախմբուելու եւ միասնաբար պայքարելու յանուն սոցիալական արդարութեան եւ օլիգարխիկ համակարգի դէմ քաղաքական պայքար սկսելու համար:

Յայտարարութեան մէջ ըսուած է.՝

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան յայտարարութիւնը երկրում տիրող վիճակի վերաբերեալ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի կազմակերպութիւնը, վերլուծելով 1991 թ ից մինչեւ այսօր մեր Հայրենիքում վարւող ներքին քաղաքականութիւնը, արձանագրում է.

Մէկը միւսին յաջորդող իշխանութիւնները փոխում են անձանց, բայց ոչ երբեք համակարգը:

1. Այս համակարգը կոչուած է հարուստին հարստացնելու եւ աղքատին աւելի աղքատացնելու:
2. Վերջին 24 տարիների ընթացքում իրար յաջորդող իշխանութիւնների թեթեւ ձեռքով ոչնչացուել եւ օտարին է յանձնուել Հայաստանի ազգային հարստութիւնը, որը հանդիսանում է Հայաստանի ինքնիշխանութեան կարեւորագոյն՝ բաղկացուցիչ մաս:

3. Հայաստանն այլևս սուղերեն պետութիւն չէ ներքին ուսուրանների օգտագործման առումով: Առկայ համակարգը կուլ է սուղ Հայաստանի էներգետիկ, հանքարդիւնաբերական, արտադրական համակարգերը, տեղական արտադրողը խեղդուած է, իսկ Հայաստանից ամէն տարի դուրս են բերուում միլիարդաւոր տոլարների համող գումարներ:

4. Հայաստանում առկայ է ընկերային անարդարութեան մի համակարգ, որը երկիրը տանում է դէպի գաղութացման:

5. Հայաստանում շատ մեծ թւերի է հասնում արտագաղթի ու գործազրկութիւնը, իսկ աշխատաւոր զանգուածը, որի հիմնական գործատունն օլիգարխիան է, գրկուած է սեփական իրաւունքները պաշտպանելու գէթ մէկ տարրական հնարաւորութիւնից:

6. Հայաստանում չեն գործում աշխատաւոր մարդուն պաշտպանելուն ուղղուած արհմիութիւնները, խախտուած վիճակում է ծ ժամեայ աշխատանքային կրաֆիքը:

Ելնելով այս ամէնից եւ փաստելով, որ Հայաստանում կայացած է քաղաքական համակարգը՝ ՄԴՀԿ կոչ է անում բոլոր ձախ ուղղուած շաբ.ը էջ 4

## «ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԹԱԼԸ ՄԵՂՔ ՉԷ», Կ'ԸՍԷ ՏԱԻՈՒՏՕՂՈՒ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Տաւուսօղլու, երկրի խորհրդարանին մէջ պատասխանելով իր երեւան կատարած այցելութեան հետ կապուած քննադատութիւններուն, յայտարարած է, որ Հայաստան երթալը մեղք չէ:

Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովին մէջ Տաւուսօղլու յայտարարած է, որ «Հայաստանի եւ հայերու հետ «արդար չիշողութեան» ծիրին մէջ հանդիպելը մեղք չէ»:

Թրքական որոշ թերթեր Տաւուսօղլուի երեւանեան այցը կը համարեն Թուրքիոյ ազգային շահերուն հակասող քայլ: Զինք յատկապէս կը մեղադրեն, որ երեւանէն հեռանալու ատեն օդանաւին մէջ ան թրքական մամուլի ներկայացուցիչներուն ըսած է, թէ 1915-ը [Հայոց ցեղասպանութիւն] «սխալ էր եւ անմարդկային»:

Թուրք նախարարը Դեկտեմբեր 12-ին երեւան ժամանած էր Սեւծովեան Տնտեսական Համագործակցութեան անդամ պետութիւններու արտաքին գործոց նախարարներու խորհուրդի 29-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով:

Տաւուսօղլուի այցի ընթացքին երեւանի մէջ տեղի ունեցաւ երիզասարդական բողոքի ցոյց:

ՐԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Փութինը Սամուէլ Ալեքսանեանից կը պահանջի մուծուել

ՅԱԿՈՐԲԱՂԱԼԵԱՆ

Հայաստանը Եւրոպա արտահանում է միայն հանքանիւթ, իսկ հայկական արտադրութեան ապրանքների սպառման շուկան Մաքսային Միութեան երկրներն են, Եւրոպայում հայկական ապրանքները չեն էլ ճանաչում, ասում են հայաստանցի խոշոր գործարարներն ու պաշտօնեաները, հիմնաւորելով Մաքսային միութեան տնտեսական նպատակադրմարութիւնը:

Այդ հիմնաւորումն իրականում ոչ թէ ՄՄ-ին անդամակցութեան, այլ պարզապէս Հայաստանի գոյութիւն քարշ տալու հիմնաւորում է:

Հայկական արտադրութիւնը Եւրոպայում իսկապէս ճանաչուած չէ: Որովհետեւ հայկական արտադրողների մեղմ ասած մեծ մասը այդպիսի խնդիր չի էլ դրել իր առաջ: Այդ խնդիրը պահանջում է ջանք եւ եռանդ, պահանջում է, որպէսզի գործարարն ասեմբլ շքեղութեան հարցում ինսպի եւ ներդրումներ կատարի իր բիզնեսի տեխնոլոգիական արդիականացման ուղղութեամբ՝ ապրանքների որակական յատկանիշները բարձրացնելու եւ եւրոպական ստանդարտի բերելու համար: Եթէ ապրանքը չհամապատասխանի այդ չափանիշին, ապա բնական է, որ Եւրոպայում այն չի կարող տեղ ունենալ:

Հայկական խոշոր բիզնեսը՝ իր ճնշող մեծամասնութեամբ, գերադասում է «նաղդը», այսինքն հնարաստորինս քիչ արդիականացում եւ հնարաստորինս շատ շահույթ, կարճաժամկէտ էֆեկտ: Դա ունի երկու պատճառ: Առաջինը մարդկային տեսակն է: Կայ հայկական բաւական բնորոշ ասոյթ՝ «չեն տեսել պատից կախ, տեսել են ճակատից կախ»: Հայաստանեան խոշոր կապիտալի կողմների ճնշող մեծամասնութիւնը խորհրդային հասարակարգի անյաջողակ, ճնշուած, թերուս, անգրագէտ քրէական շերտի ներկայացուցիչներ են եղել: Նրանց ճնշող մեծամասնութեան արժեհամակարգում ոչ թէ աշխատանքն է արժէք, այլ «աշխատանքն էլ», արժէք է շքեղութիւնը, շատ ու ճոխ մեքենաները, շատ թիկնապահները, թիկնապահների շատ մեքենաները, կենցաղի, ժամանցի այլ զանազան շքեղութիւնները: Նրանց համար կապիտալը, փողը «նախկին կեանքի» բարդոյթները խեղդելու միջոց է: Դրա համար էլ խեղդում է ռազմավարական զարգացումը եւ արդիականացումը որպէս զաղափար, արժէք, որպէս ուղենիշ:

ԽՍՀՄ փլուզումից յետոյ կտրուկ փոփոխութեան շնորհիւ նրանք յանկարծ դարձել են կամ բարձրագոյն իշխանութեան տէր միանգամից, կամ նախ այդ իշխանութեան համար պահանջուած սպասաւոր, իսկ յետոյ նաեւ այդ իշխանութեան «փայտէջ»: Դա էլ իր հերթին բերել է կապիտալի հսկայական չափաբաժիններին: Նրանց միջեւ բաժանուել է իշխանութիւնն ու տնտեսութիւնը համապատասխան քուտաններով, իսկ դրանք վիճարկուել են ոչ թէ օրէնքով եւ Սահմանադրութեամբ, այլ ներհա-

մակարդային խաղի կանոններով: Այդ ամէնն էլ արդիականացման ներքին պահանջի բացակայութեան երկրորդ պատճառն է:

Արդիականացման խթանը մրցակցութիւնն է եւ անկախ դատական համակարգով դրա պաշտպանուածութիւնը: Եթէ գործարարների միջեւ ամէն ինչ բաժանուած է, եւ վէճերն էլ հանգուցալուծուած են ներդիւնական «սխողկաներով», ոչ թէ տեղի է ունենում տնտեսվարման հմտութիւնների մրցակցութիւն, այլ արդիականացման անհրաժեշտութիւնը վերանում է՝ ինչու աւելորդ փող ծախսել, եթէ հնարաւոր է հարցերը լուծել աւելի էժան եւ շարունակել ստանալ մեծ շահույթներ:

Այդպիսով, բարձր բիզնես մշակոյթն ու ստանդարտները մնում են չպահանջուած: Աւելին, ոչ միայն չպահանջուած, այլ սկսում են անգամ հանդիսանալ շատ կոնկրետ վտանգ այդ կապիտալիստների համար, որովհետեւ նրանք զգում են, որ չունեն մրցակցային ինտելեկտ եւ արժեհամակարգ:

Քանի՛ անգամ է ընդհուպ Ուկրաինայի դեսպանի մակարդակով զգուշացուել Սամուէլ Ալեքսանեանին, որ նա շփոթութեան աստիճան չկրկնօրինակի օղիների ապրանքանիշները, կամ պարզ ասած՝ չկեղծի: Սակայն Սամուէլ Ալեքսանեանն անխուով արել է իր գործը եւ անում է: Եւրոպական տնտեսվարման ստանդարտներում նա ստիպուած էր լինելու դադարեցնել: Մաքսային Միութիւնում նրան ոչ ոք ոչինչ չի ասի, պարզապէս գուցէ պարբերաբար կը պահանջեն գերահոյթներից ինչ որ բան մուծուել:

Դա մի օրինակ է: Օրինակները շատ են, թէ ինչպէս Հայաստանի բարձրաստիճան պաշտօնեայ կամ օլիգարխ կապիտալիստների համար նախընտրելի է Մաքսային Միութեան «ստանդարտը», քանի որ այն փաստացի ոչինչ չի պարտադրում, ի տարբերութիւն Եւրոպայի: Իսկ ստանդարտի պարտադրումը շղթայական երեւոյթ է: Այսինքն, հնարաւոր չէ գալ կայուն ու բարձր ստանդարտի տնտեսութեան ասպարէզում, միւս բոլոր ասպարէզներում մնալով ցածր ստանդարտների ներքոյ:

Շատերը կարող են բերել Չինաստանի օրինակը: Սակայն դա երեւի թէ այնքան էլ յաջող օրինակ չէ: Հակառակը, նախ Չինաստանը նոր-նոր է փորձում տնտեսութեան մէջ գալ բարձր ստանդարտի, եւ բացի այդ էլ՝ դա հենց Չինաստանի լրջագոյն խնդիրներից մէկն է, որ սպասում է նրան առջեւում. մի կողմից չինական տնտեսութեան ծաւալներն այլեւս անխուսափելի են դարձնում ստանդարտների աճին անցնելը, միւս կողմից Պեկինը գիտակցում է դրա շղթայական բնոյթը եւ այսպէս ասած մարտահրաւէրները հասարակական-քաղաքական փակ համակարգի համար: Ընդ որում, հենց այդ խնդիրն է, որ զսպում է Պեկինին, այլապէս Չինաստանը համաշխարհային ասպարէզում ներկայում ունի գուտ ծաւալային առումով աւելի ազդեալ եւ յաւակնուտ լինելու ռեսուրսներ:

«ԼՐԱԳԻՐ»

Ի՞նչ խաղ խաղաց Սերժ Սարգսեանը

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Այսպիսով Տիգրան Սարգսեանի եւ նրա ղեկավարած Կառավարութեան հրաժարականի հարցն այլեւս կարող ենք փակուած համարել: Դրա մասին բացառապէս ակնարկեց անգամ երկրի նախագահ Սերժ Սարգսեանը՝ էկոնոմիկայի նախարարութիւն ուրբաթօրեայ այցի ընթացքում: Ս. Սարգսեանն իր հերթական խորհրդակցութիւնն անցկացրեց ՀՀ էկոնոմիկայի նախարարութիւնում, որտեղ պարզ ու հասկանալի բառացիօրէն հետեւեալն ասաց. «Փետրուար-Մարտ ամիսներին, երբ Ազգային Վիճակագրական Ծառայութիւնն արդէն վերջնականապէս կ'ամփոփի 2013 թուականի սոցիալ-տնտեսական արդիւնքները, կառավարութիւնը հանդէս կը գայ խորքային ու մանրակրկիտ վերլուծութեամբ: Կը ներկայացուեն տարուայ ընթացքում արձանագրուած միտումները, կ'երեւան, թէ որքանով են կատարուել 2013 թուականի համար դրուած նպատակները, կատարուել են, թէ ոչ, եթէ չեն կատարուել, ապա որո՞նք են այն օբիեկտիւ ու սուբիեկտիւ պատճառները, որոնք յանգեցրել են շեղումների, որքանով են արտաքին գործօններն ազդել արդիւնքի վրայ, եւ ապագայ զարգացումների համար ի՞նչ հիմքեր են դրուել եւ այլն»: Նախագահը մանրամասնեց, որ այդ վերլուծութիւնները պէտք են, որպէսզի բոլորի համար հասկանալի լինեն «Որոշումներն ու մօտեցումները»: Հասկանալի է, որ խօսքը կառավարութիւնը ցրելու կամ չցրելու՝ իր հնարաւոր, ինչու ոչ՝ նաեւ խոստացած որոշման մասին է: Բանն այն է, որ Սերժ Սարգսեանը մի քանի ամիս առաջ յայտարարել էր, որ կառավարութիւնը, որը չի կարողանում ապահովել 7 տոկոս տնտեսական աճ, պէտք է հրաժարական տայ: 2013 թուականին տնտեսական աճի այդ ցուցանիշը ոչ միայն կասկածի տակ է, այլ այն կարող է անգամ 5 տոկոսի չհասնել: Ընդ որում, 2014 թուականի պետական պիւտճէն ԱԺ-ում ներկայացնող Տիգրան Սարգսեանն իր ելոյթում տեղ-տեղ խոստովանում էր, որ յետընթաց է արձանագրուել բիզնես միջավայրի գրաւչութիւնն ապահովելու հարցում: Հայաստանում նուազեւ են բիզնես ակտիւթեան ցուցանիշները: Այսուհանդերձ, Սերժ Սարգսեանը փակեց կառավարութեան հրաժարականի թեման, որն ակտիւօրէն բացել էին նաեւ իր կուսակիցները:

ՀՀ պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Դաւիթ Յարութիւնեանն, օրինակ, «Ժողովուրդ»-ի հետ զրոյցում ոչ աւել, ոչ պակաս ակնարկել էր կառավարութեանն անվստահութիւն յայտնելու գործընթացի մասին՝ անդադադաւալով ՀՀԿ-ական նախարարներ Դաւիթ Սարգսեանի եւ Արմէն Աշոտեանի յայտարարութիւններին. թէ՛ Հայաստանում 7 տոկոս տնտեսական աճ գրանցելու Սերժ Սարգսեանի յանձնարարութիւնը «քաղաքական յայտարարութիւն» եւ «քաղաքական յորդոր» էր, Դ. Յարութիւնեանը նշել է. «Այո, դա իրաւական պահանջ էր, այլ՝ քաղաքական»:

Սակայն քաղաքական պահանջները ենթադրում են նաեւ քաղա-

քական պատասխանատուութիւն: Այն կարող է լինել զուտ կուսակցական, բայց կարող է լինել նաեւ աւելի լուրջ. Սահմանադրութեան 84-րդ յօդուածը նախատեսում է քաղաքական պատասխանատուութիւն: Ուստի, նախագահի, կառավարութեանն անվստահութիւն յայտնելու որոշման նախագիծ ԱԺ ներկայացնելը եւ այդպէս Սահմանադրութեամբ ընձեռուած հնարաւորութիւնն իրացնելը եւս քաղաքական է» ասել էր Յարութիւնեանը, որն ի դէպ, վարչապետ Տիգրան Սարգսեանի «հակառակորդ» թիւմում է՝ Սերժ Սարգսեանն, ըստ ամենայնի ճիշդ ժամանակին չի շեղրեց կուսակիցներին, որ որոշում կայացնելու մենաշնորհն իրենն է, իսկ ինքը չի պատրաստուում կառավարութիւնը ցրել: Իզուր չէ, որ Սերժ Սարգսեանը չի շատակել է «օբիեկտիւ» պատճառների մասին, դժուար չէ բոլոր ծախողումներին «օբիեկտիւ» պատճառաբանութիւն տալ: Մնում է Սերժ Սարգսեանը Տիգրան Սարգսեանին եւ նրա թիմին յորդորի հնարաւորինս լաւ պատրաստուել՝ «օբիեկտիւ» արդարացումները հիմնաւորիչ ներկայացնելու համար:

Յ.Գ.-Չի բացառուում, որ Սարգսեանը որոշել էր խաղալ կառավարութեան հրաժարականի թեմայով՝ թէ ներքին քրէաօլիգարխիայի հետ՝ փորձելով շօշափել տրամադրութիւնները եւ բացառապէս հակառակութիւնների օճախները, թէ Արեւմուտքի՝ հնարաւորինս շատ ֆինանսական ծրագրեր շահելու տեսանկիւնից, այսպէս կը ձեռքբազատուենք իրենց կողմից ընդունուած վարչապետից: «ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$80.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$225.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԴՀԿ-ի Հանդիպումը Ռուսաստանի Դեսպանորդի Հետ



ՄԴՀԿ պատուիրակուբիւնը Ռուսաստանի դեսպանատուն այցելութեան ընթացքին

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի կազմակերպութեան ատենապետ Նարեկ Գալստեանը, ուղեկցութեամբ ՄԴՀԿ Հայաստանի վարչութեան անդամներ Վազգէն Մեսրոպեանի, Յարութիւն Բալաբանեանի եւ արտակարգ եւ լիազօր դեսպանորդ Դմիտրի Մարտիրոսեանի, պաշտօնական հանդիպում ունեցաւ ՀՀ-ում ՌԴ դեսպանութեան դեսպանորդ Անդրէյ Իվանովի եւ Հայաստանում «Ռոսստորոկընիչեստովօ»-ի ներկայացուցչու ղեկավարի տեղակալ Իգոր Կուսովի հետ: Հանդիպման ընթացքում ՄԴՀԿ ատենապետը ներկայացրեց Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքական հարցերում Հնչակեան կուսակցութեան դիրքորոշումները եւ առաջիկայ անելիքները: ՄԴՀԿ ատենապետը ընդգծեց, որ կուսակցութիւնը Հայաստանում գործում է ձախ դաշտում՝ յանուն սոցիալական արդարութեան եւ ընդդէմ առկայ մենաշնորհների եւ օլիգոպոլիայի: Կողմերը հանդիպման ընթացքում փոխանակուեցին կարծիքներով Մաքսային Միութեանը Հայաստանի անդամակցութեան հարցում, ինչպէս նաեւ քննարկուեց իրավիճակը Հարաւային Կովկասում եւ Մերձաւոր Արեւելքում՝ յատկապէս Սիրիայում: Կողմերը համատեղ մտահոգութիւն յայտնեցին Սիրիայում խողովոյ բնակչութեան՝ յատկապէս քրիստոնեաների հանդէպ կարունակուող հետապնդումների եւ ահաբեկումների վերաբերեալ: Կողմերը փոխադարձ շահագրգռութիւն ցուցաբերեցին Հայաստանում ասպատանած սիրիահայ մեր հայրենակիցների համար յատուկ ուսուց լեզուի դասընթացներ կազմակերպելու հարցում:

Հայաստանում միգրացիոն արտահոսքն իսկապէս աղետալի կարելի է համարել: Միգրանտների միջազգային օրը Tert.am-ի հետ գրոյցում նման տեսակէտ յայտնեց միգրացիայի փորձագէտ, Ժողովրդագիր Ռուբէն Եգանեանը՝ նշելով, որ պաշտօնական թուերն արդեն իսկ դրա մասին են վկայում: Նշենք, որ ըստ տուեալների՝ 2013թ-ի Յունուար-Մեպտեմբեր ամիսներին Հայաստանից մեկնել է 1 մլն 888 հազ. 165 մարդ, իսկ ժամանել 1 մլն 780 հազ. 160 մարդ: Արդիւնքում երկիր չվերադարձողների թիւը կազմել է 108 005 մարդ: Փորձագէտը, թէեւ համաձայն է իշխանութիւնների այն տեսակէտի հետ, թէ ներկայ ժամանակներում միգրացիոն տեղաշարժը համաշխարհային խնդիր է, սակայն ընդգծեց, թէ պէտք է հաշուի առնել, թէ ինչ ծաւալների է տուեալ երկրում հասնում արտագաղթը եւ դա ինչով է պայմանաւորուած: «Միգրացիան իսկապէս համաշխարհային խնդիր է եւ բնականոն երեւոյթ, որովհետեւ մարդիկ միշտ էլ տեղաշարժուելու ցանկութիւն ունեցել են եւ տեղաշարժուել են: Ժամանակներ են եղել, որ միգրացիոն հոսքերն աւելի մեծ են եղել, քան ներկայումս: Խնդիրն այն է, թէ ինչ ծաւալներ է ընդունում եւ ինչ

Սփիւռքի Նախարարը Կոչ է անում աջակցել Նոր Հալէպ թաղամասի կառուցմանը

Հայաստանի սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը կոչով դիմում է բոլոր հայերին՝ գումար փոխանցել Նոր Հալէպ թաղամասի կառուցման համար բացուած հաշուեհամարին: «Ուզում եմ դիմել բոլոր մեծահարուստներին, որ իրենք համարեն Նոր տարուայ փոքրիկ նուէր սիրիահայութեանը: Ուզում եմ դիմել բոլոր տղամարդկանց, որ այս շաբաթ իրենց փոքրիկ խնջոյքները նուիրեն սիրիահայութեանը: Ուզում եմ դիմել բոլոր կանանց՝ այս ամիս իրենց համար գգեստ, որեւէ բան գնելու փոխարէն թող այդ գումարը նուիրեն սիրիահայութեանը: Այնպէս որ, եթէ ուզենանք, շատ արագ ձեռով մենք կարող ենք օգնել այս մարդկանց», - ասաց նախարարը: Աշտարակ քաղաքում սիրիահայերի համար նախատեսուած է երկու տարուց շահագործման յանձնել շուրջ 500 բնակարանով թաղամասը՝ 20-24 բազմաբնակ շէնքերով ու առանձնատներով: 1-3 սենեականոց բնակարաններով թաղամասի կառուցման համար, նախարարութեան գնահատականներով, կը պահանջուի շուրջ 35 միլիոն դոլար: Ամիսներ առաջ Նոր Հալէպ թաղամասի կառուցման համար բացուած հաշուեհամարին արդէն փոխանցուել է աւելի քան 100,000 դոլար: Նախարարի տուեալներով, խոստումներ են տուել նաեւ յայտնի գործարարներ: Կէս տարի առաջ Աշտարակի քաղաքապետարանը շուրջ 5 հեկտար տարածք է անհատոյց յատկացրել «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպութեանը: Դեռեւս ամայի, անբերակարգ տարածքը ճարտարապետներ Գոհար եւ Վահէ Թուրուջեանների նախագծով կը վերածուի ժամանակակից, նորաճ թաղամասի: Տարածքում կատարուել են երկրաբանական աշխատանքներ, արդէն պատրաստ է թաղամասի նախագիծը: Հեղինակները նախագիծը են ոչ միայն, բնակելի տարածքներ, այլեւ խանութներ, ակումբ, առողջապահական հաստուած: Նոր Հալէպ թաղամասի բնակարանների մէկ քառակուսի մետրը սիրիահայերին կը վաճառուի մինչեւ 500 դոլարով: Այս ծրագիրն, ինչպէս նշում է Սփիւռքի նախարարը, սոցիալական է, բայց նպատակ ունի աջակցել սիրիահայերին հաստատուել հայրենիքում: Եւ որքան շատ գումարներ հաւաքուեն, այնքան սիրիահայերը քիչ կը վճարեն բնակարանի համար: Նախնական տուեալներով, նրանք վճարելու են բնակարանի արժէքի մէկ երրորդը: Սիրիական պատերազմի պատճառով հայրենիք տեղափոխուած սիրիահայերը, որոնք գտնէ այս շրջանում չտեղաբաժնի ճանապարհ չունեն, մեծ ցանկութիւն ունեն հայրենիքում սեփական բնակարան ունենալ: Բայց առաջին խնդիրը գումարների բացակայութիւնն է: Պատերազմից մագապուած, Հալէպում ունեցուածքը թողած սիրիահայերը անցած երկու տարում գրեթէ սպառել են իրենց հետ բերած գումարները: Այժմ յոյս ունեն, որ Հայաստանի իշխանութիւնների ու Հայաստանեան բանակի օգնութեամբ կարողանան Նոր Հալէպ թաղամասում իրենց տանիքը ունենալ: Հայաստանում այժմ բնակուած է 11,000 սիրիահայ: Նրանցից աշխատանք ունի միայն շուրջ տասը տոկոսը:

Հայաստանում Միգրացիոն Արտահոսքն Իսկապէս Աղետալի է

«ՀՀ երեք նախագահները պետք է հեռանան քաղաքական Ասպարէզից»- Մակէեան

Հայաստանում միգրացիոն արտահոսքն իսկապէս աղետալի կարելի է համարել: Միգրանտների միջազգային օրը Tert.am-ի հետ գրոյցում նման տեսակէտ յայտնեց միգրացիայի փորձագէտ, Ժողովրդագիր Ռուբէն Եգանեանը՝ նշելով, որ պաշտօնական թուերն արդեն իսկ դրա մասին են վկայում: Նշենք, որ ըստ տուեալների՝ 2013թ-ի Յունուար-Մեպտեմբեր ամիսներին Հայաստանից մեկնել է 1 մլն 888 հազ. 165 մարդ, իսկ ժամանել 1 մլն 780 հազ. 160 մարդ: Արդիւնքում երկիր չվերադարձողների թիւը կազմել է 108 005 մարդ: Փորձագէտը, թէեւ համաձայն է իշխանութիւնների այն տեսակէտի հետ, թէ ներկայ ժամանակներում միգրացիոն տեղաշարժը համաշխարհային խնդիր է, սակայն ընդգծեց, թէ պէտք է հաշուի առնել, թէ ինչ ծաւալների է տուեալ երկրում հասնում արտագաղթը եւ դա ինչով է պայմանաւորուած: «Միգրացիան իսկապէս համաշխարհային խնդիր է եւ բնականոն երեւոյթ, որովհետեւ մարդիկ միշտ էլ տեղաշարժուելու ցանկութիւն ունեցել են եւ տեղաշարժուել են: Ժամանակներ են եղել, որ միգրացիոն հոսքերն աւելի մեծ են եղել, քան ներկայումս: Խնդիրն այն է, թէ ինչ ծաւալներ է ընդունում եւ ինչ

հետեւանքներ է ունենում, ինչով է պայմանաւորուած, սրա մասին է խօսքը, որովհետեւ տեղեր կան, դրանք ցաւազին հետեւանք չեն ունենում, տեղեր կան, որ ցաւալի հետեւանքներով չլի են: Այս ամէնը հաշուի առնելով, Հայաստանից արտահոսքը ես աղետալի եմ համարում», - ասաց նա: Ռուբէն Եգանեանը նշեց, որ Հայաստանից մարդիկ հիմնականում գնում են Ռուսաստան, իսկ Եւրոպա գնացողները, նրա խօսքով, արդէն մշտական բնակութեան նպատակով են գնում: «Եւրոպական երկրներում մի քիչ այլ է իրավիճակը, Ռուսաստանում՝ այլ: Եւրոպա եթէ գնում են, ապա նշանակում է, որ հիմնականում նպատակ ունեն մշտական բնակութիւն հաստատելու, բնականաբար, խախտելով նաեւ միգրացիոն օրէնսդրութիւնը, որովհետեւ մեծ մասամբ գնում են որպէս տուրիստներ, այլ ոչ թէ մշտական բնակութեան, եւ սկսում են արդէն կեցութեան կարգավիճակ ձեռք բերել, աշխատանքի իրաւունք ձեռք բերել»: Հարցին, թէ որքանով են պաշտպանուած միգրանտները, փորձագէտը պատասխանեց, թէ բնականաբար պաշտպանուած չեն: «Մանանակը, եթէ հանդիսանում են անօրինական միգրանտներ եւ չեն պահպանում մուտքի եւ ելքի, կեցութեան եւ բնակութեան, աշխատանքի օրէնսդրութիւնը»:

ՀՀ երեք նախագահները պէտք է քաղաքական արեւաչից (Ապարէզ) դուրս մղուեն, որովհետեւ երկրում ստեղծուած իրավիճակի համար պատասխանատու են երեքն էլ՝ մէկը մի քիչ շատ, միւսը՝ մի քիչ քիչ: Նման կարծիք լրագրողների հետ հանդիպմանը յայտնեց «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակէեանը: «Առաջին նախագահը հնարաւորութիւն ունէր 2008թ. գալ իշխանութեան ու իրավիճակը շտկել, բայց չստացուեց: Երկրորդ ու երրորդ նախագահները, բայց հեռանալուց, պէտք է նաեւ պատասխանատուութեան ենթարկուեն իրենց արածների համար: Յատկապէս՝ Ռոբերտ Գոչարեանը», - ասաց նա: Պետրոս Մակէեանն ընդգծեց, որ եթէ «Հայ Ազգային Կոնգրէս» խմբակցութեան պատգամաւոր Նիկոլ Փաշինեանի հիմնած «Քաղաքացիական Պայմանագիր» հիմքում դրուի ՀՀ երեք նախագահներին քաղաքականութիւնից հեռացնելու նախապայմանը, «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցութիւնը, հնարաւոր է, նաեւ համագործակցի: «Նիկոլի եւ Սասունի հետ եկար ճանապարհ ենք անցել: Մենք միշտ եղել ենք շարժումների առաջին կարգերում՝ անկախ նրանից, թէ ով է առաջնորդը ու դա արել ենք



Ժողովրդավարական Հայրենիք կուսակցութեան նախագահ Պետրոս Մակէեան

առանց նախապայմանների: Այսուհետեւ մեր կուսակցութիւնը մասնակցելու է նախապայմաններով: Եթէ դրանք կ'ընդունեն, բնականաբար մենք կը համագործակցենք ու խնդիր չի լինի», - ասաց նա: Հարցին, թէ իր կարծիքով նոր ձեւաւորուող այս քաղաքական ուժը արդեօ՞ք կարող է երեք նախագահներին հեռացնել քաղաքական դաշտից, Պետրոս Մակէեանն ասաց. «Անգամ բոլոր քաղաքական ուժերը միասին չեն կարող պարտադրել նրանց, առանց հասարակութեան հետ աշխատելու: Հասարակութեան շրջանում պէտք է հասցնել այն միտքը, որ գործող նախագահն այլեւս անելիք չունի, իսկ առանձին անելը բարդ է»:

# ԼՈՒՐԵՐ

## Բակո Սահակեան.- «Արցախը Պետք է Վերադառնայ Բանակցութիւնների Սեղան»

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակեանը Դեկտեմբերի 17-ին ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (ՌԴ), Ժակ Ֆորին (Ֆրանսիա), Ջեյմս Ուորլիքին (ԱՄՆ) եւ նրանց ուղեկցող անձանց:



Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակեանի հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներուն հետ

Արցախի նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխավոր վարչու թիւնից յայտնում են, թէ հանդիպմանը քննարկուել են ադրբեջանա-դարաբաղեան հակամարտութեան կարգաւորմանը եւ տարածաշրջանային գործընթացներին վերաբերող մի շարք հարցեր: Երկուստեք կարեւորուել է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ադրբեջանա-դարաբաղեան յարաբերութիւնների խաղաղ կարգաւորումը եւ ուժային տարբերակների բացառումը:

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանը շնորհակալ է արտայայտուել իր արտաքին գործերի նախարար Կարէն Միրզոեանը, ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ, դեսպան Անջէյ Կասպշիկը, պաշտօնատար այլ անձինք:

Նախագահ Սահակեանը գործընթացի առանցքային նախապայ-

մաններից է համարել պաշտօնական Ստեփանակերտի լիիրաւ մասնակցութեամբ բանակցային լիարժէք ձեւաչափի վերականգնումը եւ Ադրբեջանի կողմից ազդեակ ու ապակառուցողական քաղաքականութեան դադարեցումը:

Հանդիպմանը ներկայ էին Արցախի Հանրապետութեան արտաքին գործերի նախարար Կարէն Միրզոեանը, ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ, դեսպան Անջէյ Կասպշիկը, պաշտօնատար այլ անձինք:

## Ռուս Փորձագետ.- «Ռուսաստանն Ուղղակի Սահման Կ'ունենայ Հայաստանի Հետ»

Ռուսաստանն ու Հայաստանն ընդհանուր սահման կ'ունենան եւ դա մօտ ապագայի հարց է: Այս մասին, Դեկտեմբերի 18-ին, յայտարարել է «Ռազմավարական կոնսիլիումի կենտրոնի» փոխտնօրէն Միխայիլ Շերնովը՝ «Անվտանգութիւնն ու Համագործակցութիւնը Հարաւային Կովկասում» թէմայով միջազգային կոնֆերանսի ժամանակ:

Մալ ապահովման համար Ռուսաստանը պէտք է ընդհանուր սահման ստեղծի Հայաստանի հետ, որպէսզի աջակցի Գիւմրիում իր ռազմականի անվտանգութեանը: «Հիմա Հայաստանում շատերը կասկածում են, թէ ինչպէս են գործելու Մաքսային Միութեան եւ Եւրասիական միութեան կազմում՝ չունենալով ընդհանուր սահման Ռուսաստանի եւ Եւրասիական միութեան միւս երկրների հետ: Բայց այս վիճակը երկար չի տևի: Ռուսաստանը ուղղակի տրանսպորտային ենթակառուցումներ կ'ունենայ Հայաստանի հետ յարաբերութիւններում», - յայտարարել է փորձագէտը՝ ընդգծելով, որ դա կ'իրականացուի տրանսկովկասեան տրանսպորտային միջանցքի զարգացման միջոցով:

«Գոյութիւն ունի 3 Կովկաս. Արեւելեան Կովկաս (Դաղստան, Ադրբեջան), Կենտրոնական Կովկաս (ՌԴ-ի հիւսիսկովկասեան շրջանները, այդ թւում Չեչենիան, Հարաւային եւ Հիւսիսային Օսիաները, Վրաստանի եւ Հայաստանի զգալի մասերը) եւ կայ Արեւմտեան Կովկաս (Արեւմտեան Վրաստան եւ Աբխազիա):

Նրա ներկայացմամբ՝ հիմնական մայրուղին, որը պէտք է ռուսական հիւսիսային Կովկասը եւ արեւմտեան Ղազախստանը կապի Կովկասի հետ, Տրանսկովկասեան մայրուղին է: Միխայիլ Չերնովը նաեւ յաւելել է, որ Տրանսկովկասեան մայրուղին կը համալրուի նաեւ երկաթգծով:

Առանցքային նշանակութիւն ունի Կենտրոնական Կովկասը, եւ հիմնական տրանսպորտային ուղիներն ու ենթակառուցումները անցնելու են Կենտրոնական Կովկասով», -ասել Չերնովը:

Նրա խօսքով՝ նորմալ գործունէութեան եւ անվտանգութեան նոր-

## Եւրոպական Դատարանի Որոշումը

Շաբաթական էջ 1-էն

Հեց, որ գուցէ Եւրոպական դատարանը խախտած է Մարդու Իրաւունքներու Եւրոպական Ուխտը, որու համաձայն մարդիկ ազատ արտայայտուելու իրաւունք ունին եւ անոր համար պէտք է քրէական պատիժներու ենթարկուին:

յայտնէ, թէ Տողու Փերինչէք երբեք չէ վիճարկած զանգուածային ջարդերն ու տեղահանութիւնները, այլ հանդէս եկած է ցեղասպանութիւն բնորոշումը օգտագործելու դէմ:

Դատարանի որոշման մէջ նշուած է թէ, Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած երկիրները անպայման չէ որ, այդ պաշտօնական տեսակէտը վիճարկողներու դէմ քրէական պատիժներ նախատեսող օրէնքներ ընդունին:

Դատարանը իր որոշման մէջ յիշեցուցած է նաեւ անցեալ տարի Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդի կայացուցած որոշումը:

Եւրոպական դատարանը կը

Որոշումը ընդունած դատական խումբը բաղկացած էր եօթը դատաւորների, նախագահութեամբ՝ Իտալացի Կուրտօ Ռայմոնտինիի:

Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանի այս վճիռը կրնան բողոքարկել կողմերէն ոեւէ մէկը՝ երեք ամսուայ ընթացքին:

## Քոնկրետական Ատամ Շիֆ Մդադիր Է «Որբերու Գորգը»-ը Ցուցադրել Քոնկրետէն Ներս

ԱՄՆ քոնկրետական Ատամ Շիֆ նամակ մը յղած է նախագահ Պարաք Օպամային՝ Սպիտակ Տան պահեստանոցին մէջ գտնուող «Հայ որբերու գորգ»-ին վերաբերելով: Շիֆը բազմիցս յորդորած է գորգը յանձնել «Ս մ ի թ ս ո ն ը ն» պ ա տ մ ու թ ե ա ն թանգարանի՝ ցուցադրութեան համար:



Նամակին մէջ Ատամ Շիֆ նշած է. «Ամերիկացիներուն մեծ մասը, ներառեալ Քոնկրէսի իմ գործընկերները, չեն գիտեր ամերիկեան արձագանգներու մասին Հայոց ցեղասպանութեան: Մեր երկիրը տարիներ շարունակ օգնած է փախստականներուն ու վերապրածներուն ցեղասպանութենէն ետք: 1925-ին Հայ որբերու խումբ մը, որոնք կ'ապրէին Լիբանանի որբանոցին մէջ, գորգ հիւսած են՝ նուիրելով զայն ԱՄՆ նախագահ Քալուրնի Քուլիճին:

կը խորհրդանշէ ցեղասպանութեան ողբերգութիւնն ու Հայ ժողովուրդի վերածնունդը: Ես կը խնդրեմ գորգը տրամադրել մեր ձեռնարկին համար»:

Նշենք, որ «Որբերու գորգ»-ը Հայ որբերու նուէրն էր՝ իբրեւ երախտագիտութեան նշան ԱՄՆ նախագահ Քալուրնի Քուլիճին Հայոց ցեղասպանութենէն ետք: Երեւի անցած գայն գործած են տասը ամիս շարունակ, գորգը ունի 4,404,206 հանգույց:

Մենք մտադիր ենք հրաւիրելու ցեղասպանութենէն վերապրած վկաները, պատմաբանները, հայ համայնքի ներկայացուցիչներն ու քոնկրետականները՝ պատմելու համար Հայոց ցեղասպանութեան մասին եւ ցուցադրելով գորգը, որ

Թուրքիան ճնշում կը գործադրէ նախագահ Օպամայի վարչակազմին վրայ, Ուաշինկթընի «Սմիթսոնիան» թանգարանէն ներս Գորգի ցուցադրութիւնը կասեցնելու համար:

Այժմ Գորգը կը պահուի Սպիտակ Տան մէջ՝ ի շարս Ամերիկայի նախագահներու ստացած այլ նուէրներուն:

## «Հայաստանի Քաղաքական Ուժերը Ռուսամէտ Են»

Հայաստանի ընդդիմադիր ուժերն իրականում չեն ընդդիմանում Մաքսային Միութեանը, քանի որ երկիրն այլընտրանք չունի՝ կարծում է քաղաքագէտ Երուանդ Բոգոեանը՝ նշելով, որ Ռուսաստանից Հայաստանի կախուածութիւնը ակնյայտ է. «Բոլորը գիտակցում են Հայաստանի այս թոյլ վիճակը, բոլորը գիտակցում են, որ մարդիկ փախչում են երկրից, գնում են Ռուսաստան: Ոչ ոք չի ուզում խօսել դրա մասին՝ բնականաբար հասկանալով, որ կը կորցնի վարկանիշը հասարակութեան մէջ»:

լինէր: Շատ կը լինէին եւրոպամէտ դիրքորոշումները»:

Քաղաքագէտ Ստեփան Դանիէլեանն էլ եւրոպամէտ կամ ռուսամէտ որակումները համարում է մտացածին. «Քանի որ ՀՀ իշխանութիւնները բոլոր առումներով տապալուել են, նրանք կեղծ դիտարկումներ են ձեւաւորում եւ նաեւ խթանում են, որ ռուսամէտ կամ արեւմտամէտ ուժեր ձեւաւորուեն, որոնց մեծ մասը հովանաւորուած է իշխանութիւնների կողմից:

Միաժամանակ պարոն Բոգոեանը վստահ է՝ ընդդիմադիր ուժերը յոյս ունեն, որ եթէ գան իշխանութեան, ապա կարող են հաւասարակշիռ քաղաքականութիւն վարել Եւրոպայի եւ Ռուսաստանի հետ: Այս համատեքստում է նա դիտարկում այսօր Հայաստանում չհնչող հակառուսական յայտարարութիւնները: Ռուսաստանի դէմ շարտայայտուելու պատճառներից մէկն էլ նա համարում է Հայաստանի ոչ բարեհաճ հարեւանների առկայութիւնը. «Եթէ մեր հարեւանը լինէին Հունգարիան եւ Լեհաստանը, ապա ուրիշ կը

Մաքսային միութեանը անդամակցելու Հայաստանի որոշման առիթով քաղաքական ուժերի լուծութիւնը քաղաքագէտը գնահատում է բնական, իսկ հանրութեան լուծութիւնը՝ անհանգստացնող. «Հանրութիւնը օտարուած է քաղաքական դաշտից, տեղեկացուած չէ, քաղաքական տեսակէտներ չի յայտնում: Այսինքն՝ եթէ հանրութիւնը դուրս չի գալիս փողոց, դա չի նշանակում, որ անտարբեր է: Ուղղակի ապակողմնորոշուած է, նրան ոչ ոք չի բացատրում, չի հասկացնում: Նրանք չեն վստահում քաղաքական ուժերին, քանի որ գիտեն, որ նրանք գործակցում են իշխանութեան հետ»:

## ՄԴԿ Զամախմբուելու Կոչ Կ'ընէ

Շաբաթական էջ 1-էն

Ծու թիւն ունեցող քաղաքական ուժերին օր առաջ համախմբուելու եւ ստեղծել ամուր եւ միասնական միութիւն՝ յանուն սոցիալական արդարութեան եւ օլիգարխիկ համակարգի դէմ քաղաքական պայքար սկսելու համար:

բացառութեան բոլոր ձախ ուժերի, այդ թւում նաեւ ձախակողմեան գաղափարախօսութիւն կրող անհատների հետ, ընդհանուր միասնական պլատֆորմ ստեղծելու համար:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնն արդէն 2014 թ.-ի սկզբին կը տեղեկացնի հանրութեանը իր գործողութիւնների եւ անելիքների մասին:

# ՍԵԻԱՆ ՆՇԱՆԵԱՆ: «ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՍԵՋ ԶԱՅԵՐԷՆ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ, ՈՐ ԴԵՋ ԵՒ ԶԼՈՒ ԸԼԼԱՆ»

## ՍԱԳՕԱՐԵԱՆ

«Միայն Հանրապետությունը կամ 51 հարց Քեմալիզմին եւ Աթաթուրքին» գիրքի եւ տասնեակ այլ աշխատություններու հեղինակ, պոլսահայ լրագրող եւ բառարանագիր Սեւան Նշանեան 2004-ին ստացած է մարդկային իրաւանց «Այլէ Նուր Զարագօրու» անուան մրցանակը:

Նշանեան որ այս Ուրբաթ (20 Դեկտեմբեր) երկու տարուան բանտարկութեան վճիռին ենթարկուելով պիտի յայտնուի Պոլսոյ բանտերէն մէկուն մէջ, առաջին անգամը չէ որ «պիտի ճաշակէ» թրքական գնտաններուն «վաճելք»ները: Ան տարբեր մեղադրանքներով քանիցս յայտնուած է ճաղերու ետին, որոնց վերջինը 2001-ին, երբ ան կալանքի տակ մնաց տասը ամիս: Յիշեցնեմ, որ Նշանեան 1995-էն ի վեր իգմիրի մօտ եղող «Շիրինճէ» աւանին մէջ հիմնադրած է Nisanyan House Hotel-ը (տեսնել այստեղ՝ www.nisanyan.com), որուն նպատակն է զարկ տալ էթնիք գբօսաշրջութեան: Այդ համալիրին մէջ նոր տնակ մը կառուցելու պատճառով (իբրեւ թէ ապօրինի) ան պիտի բանտարկուի երկու տարիով:

Սեւան Նշանեան թուրքիոյ մէջ այսօր դարձած է ազատութիւններու եւ փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութեան համար պայքարող կարեւորագոյն անուններէն մին: Ստորեւ անոր հետ կատարուած կարճ հարցազրոյցը՝ այն յոյսով որ մօտիկ ապագային պիտի կարողանամ աւելի մանրամասն գրել ազատութեան գինուորին մասին:

Յայկական մամուլին մէջ վերջին օրերուն երեւցան իրապարակումներ, ըստ որոնց՝ դուք չորս տարուան բանտարկութեան պատիժ ստացած էիք: Աւելի ուշ ըսուեցաւ, թէ ձեր պատիժի ժամանակահատուածը երկու տարի էր: Ինչու ի՞նչ է իրականութիւնը:

Ըսեմ, որ իմ դէմս մի քանի դատավարութիւններ կան: Հիմա երկու տարուան բանտարկութեան խնդիրը արդէն վճռուած է, բայց կը կարծեմ, որ յառաջիկային այլ երկու տարի եւս կրնամ բանտարկուիլ ու անկէ ետք նաեւ տասը ամսուան վճիռ մը կրնայ ըլլալ:

Այսինքն երկու տարուան վճիռը արդէն գործադրութեան պիտի դրուի...

Այո եւ ես յառաջիկայ Ուրբաթ օր (20 Դեկտեմբերին) պիտի բանտարկուիմ:

Ինչքան գիտեմք՝ այս վճիռը կապուին ձեր համալիրին մէջ փոքր տնակ մը ըստ թուրքիոյ դատական մարմիններուն ապօրինի կերպով կառուցելուն հետ: Այս իրողութիւնը ինչքանով կը համապատասխանէ ճշմարտութեան:

Նախ ըսեմ, որ ասկէ բացի քսանի չափ դատեր բացուած են դէմս: Ես գբօսաշրջային համալիր մը կառուցած եմ իգմիր շրջանի «Շիրինճէ» աւանին մէջ, ուր ներկայիս կը գործէ Nisanyan House Hotel-ը, եւ թուրքիոյ մարմինները բոլոր մանրամասնութիւններուն մէջ «մագ փնտուելով» դատ բացած են դէմս: Բաւական մեծ ձեռնարկութիւն մըն է, ուր տարբեր աշխատանքներ կան ու բնական է, որ իշխանութիւնները կրցան գործ սարքել դէմս: Մինչեւ օրս



քաղաքական հետապնդում կամ խորք չկար դատական ընդհանուր գործընթացին մէջ, պարզապէս այլ պատուհաններէ մտնելով՝ գիս դատավարութեան տարին: Ըսեմ նաեւ, որ ես կը կարծէի, թէ քսան տարուան բանտարկութեան պատիժ կրնայի ստանալ, քանի որ դէմս կարծեմ Լինչի դատատան մը բացուած էր, ու բոլոր կողմերէն կազմակերպուած արշաւ մը կայ: Բայց կարծածէս աւելի թեթեւ եղաւ այս վճիռը:

Իսկ խօսակցութիւն կայ, որ Սոհամնէտ Սարգսի մասին գրելուդ պատճառով էր, որ դատուեցաք: Ի՞նչ կ'ըսեք:

Կրօնական նիւթերուն մասին վերջին տարիներուն շատ մը գիրքեր գրած եմ: Ընդհանրապէս կրօնքներու եւ մասնաւորապէս Մահմետական կրօնքին մասին նիւթերու վրայ կ'աշխատիմ ու փորձած եմ ժողովուրդին որդեգրած կամ ընկալած գաղափարներէն դուրս բաներ ըսել: Ու ատոր համար է որ դէմս Լինչի դատավարութիւն մըն էր, որ սկիզբ առաւ: Մինչեւ էրտողանին ամէնէն մօտ մարդոց կողմէ գրոհի թիրախ դարձայ: Անկէ ետք հազարաւոր Tweet-ներ եւ հազորդագրութիւններ ստացայ եւ նոյնիսկ մահուան սպառնալիքներ հնչեցին, ու թրքական եօթ քաղաքներու մէջ դէմս դատական հայցեր եղան:

Ըսեմ որ հոս (թուրքիոյ մէջ՝ Ս.Ա.) վարժուած չեն, որ հայերը բաց եւ յստակ խօսին: Այս երկրին մէջ հայերէն կը սպասուի, որ հեզ եւ հլու ըլլան, ձայն չհանեն շատ ու իրենց քիթները ամէն տեղ չիտթեն ու այդ ժամանակ մեծ խնդիրներու չեն հանդիպիր: Իսկ երբ սկսին հանրային խնդիրներու մասին բացառապէս կերպով արտայտուիլ, ապա անոնց դէմ թշնամութեան այլիք մը կը բարձրանայ:

Կրկին մամուլէն իմացանք, որ վերջին օրերուն ձեր ազատութեան համար ստորագրահաւաք-արշաւ մը սկիզբ առած է թուրքիոյ մէջ: Ի՞նչ արշաւ է այդ մէկը:

Ըսեմ որ գիրքիս եւ գաղափարներու հետեւող հազարաւոր մարդիկ կան այսօր թուրքիոյ մէջ, ու այս ստորագրահաւաքը այդ ծիրին մէջ է պէտք է տեսնել: Անոնց մէջ բնականաբար կան նաեւ համակիրներ, որոնց անձամբ ես ծանօթ չեմ: Ստորագրահաւաք մը սկսած են, բայց իմ կարծիքով այս ստորագրահաւաքը ոչ մէկ բան պիտի յաջողի փոխել, որովհետեւ բանտարկութեան վճիռը արդէն կայացուած է, ու ես պիտի կրեմ այդ «պատիժ»ը: Ուրիշ ճար չկայ: Յառաջիկայ ուրբաթ օր պիտի յայտնուիք բանտի ճաղերու ետին: Ինչպիսի՞նք են ձեր զգացողութիւնները:

# ՈՐՔԱՆ Է ԶԱՐՈՒՄՏՆԵՐԻ ԵՒ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԻՐԱԿԱՆ ԱՆԴՈՒՆԴԸ

## ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Օրերս ինձ մօտեցաւ մի քաղաքացի (կամ գուցէ «կազմաւորական» սաղրիչ) եւ ասաց, որ նա պատրաստ է գրոհով վերցնել Բաղրամյան 26-ը, եւ եթէ իր նման մի երկու հազար «գրոհայիններ» լինեն, ապա գործը գլուխ կը գայ: Սակայն, բացի այս ցնդաբանութիւնից, նա նաեւ ներկայացնում էր ճիշտ դիտարկումներ, որոնցից մէկն այն էր, որ Հայաստանում մնացել են ամենահարուստներն ու ամենաաղքատները, իսկ դա խնդիր է ազգային անվտանգութեան տեսանկիւնից:

Խօսքը, ինչպէս հասկանում էք, աղքատների եւ հարուստների միջեւ ահագնացող անդունդի մասին է, որը խնդիր է ոչ միայն Հայաստանում: Ռուսաստանում, օրինակ՝ 10 տոկոս ամենահարուստների եւ 10 տոկոս ամենաաղքատների խզումը կազմում է աւելի քան 30 անգամ, չնայած «պաշտօնապէս» 16 անգամ է: Այս մասին է վերջերս յայտարարել Վիճակագրութեան գիտահետազոտական ինստիտուտի նախկին տնօրէն Վասիլի Սեմչարան, որը լքեց իր պաշտօնը՝ բացականչելով՝ «Յոգնել եմ ստեղծելուց»: Սեմչարան բերել է նաեւ մի շարք այլ ուշագրաւ տարբերութիւններ՝ իրականի եւ պաշտօնականի միջեւ, բայց կենտրոնանալով միայն այս ցուցանիշի վրայ:

Հայաստանում նման պաշտօնական թիւ չկայ՝ խզումը կարելի է որոշել միայն աչքաչափով: Վերցնենք «միջին» աղքատին՝ ամիսը 100.000 դրամ ստացող ուսուցչին եւ միջին հարուստին՝ սանեք, մաքսայինի (ոչ թէ միութեան, այլ ծառայութեան) «միջին» կաշառակերին, որը ստանում է ամիսը 10.000.000 «անաշխատ եկամուտ» (ոնց էլ լինի՝ օրական մի 800 դրար կը փախցնի): Նրանց միջեւ տարբերութիւնը 100 անգամ է, ինչը

սարսափելի մեծ թիւ է:

Պաշտօնապէս նման թուեր աշխարհում չկան (բոլորը, հաւանաբար, թաքցնում են ճշմարտութիւնը): Ներկայացնեմ ՄԱԿ-ի որոշ տուեալներ. Բրազիլիա՝ 57, 8, Արգենտինա՝ 34,5, Վրաստան՝ 15,4, Մեծ Բրիտանիա՝ 13,8, Ճապոնիա՝ 4,5: Ըստ որոշ գիտնականների, երկրի կայունութեան համար անհրաժեշտ է, որ այդ խզումը լինի 10 անգամից պակաս: Այդպիսի բարոք վիճակ էր, օրինակ, ԱՄՆ-ում՝ 1960-70-ական թուականներին: Սակայն Ռեյգանի ժամանակներից սկսած, ինչպէս յայտնի է, իրավիճակը փոխուեց, եւ շարունակող խզումը Օբամայի վարչակարգի համար լուրջ մարտահրաւէր է:

Ընդհանրապէս, այս հարցով կայ երկու տեսութիւն՝ մէկը պնդում է, որ այդ խզումը նպաստում է տնտեսութեան զարգացմանը: Իսկ միւսը՝ հակառակը, կարծում է, որ դա զարգացմանը խանգարում է: Ուզում եմ հաւատալ, որ երկրորդ տեսութեան կողմնակիցներն իրաւացի են: Խնդրի «դասագրքային» լուծումները յայտնի են, մասնաւորապէս, եկամուտների վերաբաշխումը հարկերի միջոցով, կրթութեան հաւասար հնարաւորութիւններ տարբեր խաւերի համար:

Բայց Հայաստանի համար այդ դեղատոմսերը, կարծում եմ, կիրառելի չեն: Մեզ մօտ ինչպիսի հարկեր էլ դնես, միեւնոյնն է, հարուստները դրանք չեն վճարի, որովհետեւ նրանք կա՛մ սերտ աճած են իշխանութեան հետ, կա՛մ հենց պաշտօնեայ են: Ինչ մնում է կրթութեանը, ապա այդ դեղատոմսի մասին խօսել է նաեւ վարչապետը՝ իբր կրթութիւնն աղքատութիւնը յաղթահարելու ձեւ է: Բայց դա Հայաստանում չի աշխատում: Մեր խորհրդարանի կէսից աւելին հարուստ մարդիկ են, բայց արդեօ՞ք նրանք հարստացել են կրթութեան շնորհիւ:

Տրամադրութիւնս բնական է, ու ես հանգիստ եմ: Կը յուսամ, որ միշտ ճիշդը ըրած եմ ու խօսած եմ յանուն արդարին: Ըսեմ նաեւ, որ երկու կամ երեք տարի բանտարկութիւնը մեծ վնաս մը պիտի չբերէ ինձի:

Յստա՞կ է, թէ որ բանտը պիտի տարուիք:

Ոչ, դեռ պարզ չէ, թէ ինչ տեսակի բանտ մը պիտի տարուիմ: Յայրենի մամուլը երբեմն ձեր մասին լրատուութիւն կը հաղորդէ: Որոշ ակնկալիքներ ունի՞ք հայրենի մամուլէն:

Իմ հայրենակիցներուս գիտնային այլ կը բաւէ ու անոնց սրտանց իմ կողքին ըլլալը մեծ իմաստ ունի

ինձի համար: Կոնկրետ բան մը չկայ ըսելիք: Բայց կը վախնամ մոռցուելէ: Կը յուսամ նաեւ, որ երբ այս խնդիրները աւարտին, առիթ կը ստեղծուի ինձի, որ Հայաստան այցելեմ, որովհետեւ մեծ թիւով հեռակալ ընկերներ եւ ծանօթներ ունիմ:

Մեր այս կարճ գրոյցի աւարտին, ի՞նչ ունիք ըսելիք:

Տասնհինգ տարի է ի վեր այս պայքարին մէջ եմ: Ու եղածը մեծ պատերազմի մը մէջ փոքր ճակատամարտ մը կորստցնելու կը նմանի: Տարիներու պայքարէն ետք թուրքիոյ իշխանութիւնները կերպով մը յաջողեցան կոլ մը արձանագրել: Ցաւօք:

**ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ**

Մանրամասնութեան համար գաւեգել

**Նարինէին**

**(626) 818-9949**

Հասցէ՝ 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

# ՆԵԼՍԸՆ ՄԱՆՏԵԼԱՅԻ ՄԱՅՐՈՎ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՄՆՑՈՒՑ ՅՈՒՅԿԱՆ ԱՐԺԷՆԵՐՈՒ ՅՍԿԱՅ ՄԸ ԵՄ

## ԱՄՍՏՈՒՐ ԿԻՒՋԵԼԵԱՆ

Մարդկութիւնը հրաժեշտ կու տայ իր ամենէն արի, ամենէն իմաստուն, ամենէն մարդասէր, ամենէն արդարամիտ, ամենէն ներողամիտ ու ամենէն անոխակալ զաւկին, Նելսըն Մանտելային, Հարաւային Ափրիկէի առաջին սեւամորթ նախագահին, որ վախճանեցաւ 5 Դեկտեմբերի 2013ին:

### Ո՞վ էր Մանտելայ

Նելսըն Մանտելայն ծնած է 18 Յուլիս 1918ին, Հարաւային Ափրիկէի մէջ: Նախնական եւ երկրորդական ուսումը զանազան վարժարաններու մէջ ստանալէ ետք՝ իրաւագիտութիւն կ'ուսանի Hare եւ Witwatersrand համալսարաններէն ներս: Ապրելով ձոհանայութեան մէջ, կը մասնակցի քաղաքի գաղութատիրութեան դէմ ծաւալող պայքարին, մասնակցելով ANCի (African National Congress Ափրիկեան Ազգային Համաժողով) աշխատանքներուն: Որպէս իրաւաբան՝ բազմիցս կը ձերբակալուի իր քաղաքական համոզումներուն ու հակապետական կեցուածքին համար: Ափրիկեան Ազգային Համաժողովի ղեկավարներուն հետ կը դատուի, որպէս հայրենիքի դաւաճան, 1956-1961 տարիներուն: Սկզբնական շրջանին թէեւ կը մասնակցի խաղաղ ցուցեր կազմակերպելու աշխատանքին միայն, սակայն հետագային, 1961էն սկսեալ, Ափրիկեան Համայնավար Կուսակցութեան հետ կը հիմնէ MK լեղափոխական կազմակերպութիւնը, խանգարիչ միջոցներով պայքարելու համար Հարաւային Ափրիկէի apartheid (բաժանիչ, ցեղապաշտ) պետութեան դէմ: Մանտելայն 1962ին կը ձերբակալուի, կը մեղադրուի պետական լեղաշրջում կազմակերպելու յանցանքով, կը դատուի եւ կը դատապարտուի ցկեանս բանտարկութեան:

worship in houses called cemevis, not mosques. Alevis and cemevis are not recognized by the Turkish government. Alevis complain bitterly, to little avail.

Alevis have long been the victims of discrimination and even violent attacks, such as in Sivas in 1993 when 35 leading Alevis were murdered by mobs, and most recently this year in Ankara, when police fired tear-gas at protesting Alevis.

“Turkey may look like a secular state on paper,” says Izzettin Dogan, a leading Alevi, “but in terms of international law it is actually a Sunni Islamic state.” He is correct, but most of the outside world is oblivious to voices such as his.

### True Secularism

Some Turks feel that their country is secular because the Diyanet’s hegemony moderates Islam against extremist tendencies. There may be some truth to that.

But as secularism must include a respectful distance between religion and state, Turkey would still not qualify. Along with Turkey’s domestic religious repression, and employing the Diyanet in foreign policy, the claim of secularism is simply fallacious.

The Turkish government is in full-blown denial about secularism and religious freedom, as evidenced by PM Erdogan’s preposterous claim two years ago that “Turkey is a secular state where all religions are equal.”

If Turkey is ever to be secular, it must allow the free exercise of all religions – including Islam – and guarantee the rights of the faithful to be free from harassment and compulsion. The Turkish government’s acknowledgement of its past and present wrongs, especially to the non-Turkish and non-Muslim communities, and making genuine amends, must be part of this process.

Until then – particularly in the West – mainstream media, governments, religious leaders, academicians, and political analysts should cease swallowing Turkey’s fraudulent claim of secularism.

\*\*\*\*\*

David Boyajian is an Armenian American freelance journalist.

## Rep. Adam Schiff Requests

Continued from page 2

Most Americans, including a great many of my colleagues in Congress, are not aware of the scope and scale of the American response to the genocide. Our efforts, public and private, helped to relocate refugees and to provide relief to survivors and their families throughout the years of the genocide (1915-23) and after. But America’s generosity was not lost on those we helped. In 1925, a group of Armenian orphans who had been relocated to Ghazir, now in Lebanon, wove a rug, now known as the “orphan rug,” and gave it as a gift to US President Calvin Coolidge. To highlight these efforts, I will be hosting an educational event here in the Capitol and plan to invite survivors, historians, members of the Armenian-American community, and Members of Congress and their staff.

As part of this event, I believe

that it would be fitting to display that Ghazir rug, which embodies the tragedy of the genocide and the rebirth of the Armenian people and I respectfully request that it be made available for the event.

Earlier this year, the White House declined a request to loan the rug for display at an event held at the Smithsonian, stating that a book signing was not considered an appropriate venue. At the time, the White House indicated that it would consider a display of the rug in another setting, and I believe that this would be an appropriate venue and occasion for a viewing.

I hope that you will grant my request expeditiously and that the White House curator’s office will work with my staff and me to arrange a mutually acceptable date in January or February of 2014.

Thank you for your consideration.

Sincerely,

Adam B. Schiff

## Armenian Assembly Presents a Panel Discussion on 'Islamized Armenians'



PASADENA -- Last week, the Armenian Assembly of America's (Assembly) Western Region Office held a special panel discussion entitled 'Islamized Armenians'. Moderated by Armenian Observer Editor, Professor Osheen Keshishian, panelists Doris Melkonian, Arda Melkonian and Anoush Suni addressed a standing room only crowd at the University Club of Pasadena.

"It was a pleasure and honor hearing these three scholars recount their experiences and present their papers to our community and members," stated Assembly Western Region Manager Aline Maksoudian. "The overwhelming amount of interest in this presentation shows the importance and value of their work and we look forward to learning more about the progress of their research in the future," Maksoudian said.

All three panelists recently returned from Istanbul, Turkey, where they presented papers at a conference under the same title last month. The Assembly program began with opening remarks by Assembly Board member Lisa Kalustian,

alumnus of the Armenian Assembly's summer internship program in Washington, D.C. (class of 1990). She shared with the California audience her paper on "Gender and Survival Options during the Armenian Genocide" as presented at the Istanbul conference, retelling the tales of the Armenian Genocide survivors whose memory is preserved in the Armenian Genocide oral history survivor memoirs at the University of California Los Angeles (UCLA).

Finally, Anoush Suni summarized her paper on "The Production of Difference: the Case of Islamized Armenians." She also remarked on her experience in Turkey, and what others shared with her, delving deep into her emotional state at the time, and spoke at length about her experience living with a Kurdish family in Turkey, as well as her time in neighboring Armenia.

The Melkonian sisters also showed a slide presentation complete with pictures from the Istanbul conference, sponsored by the Hrant Dink Foundation and the MalatyaHye Foundation. Together,



who thanked everyone for their interest and participation that evening. Kalustian then introduced an early participant during the Assembly's founding, Osheen Keshishian, who gave introductory remarks about the Assembly panel participants.

First to take the podium was Doris Melkonian, an alumnus of the Armenian Assembly's summer internship program in Washington, D.C. (class of 1994). She shared her paper on "Taken into Muslim Households – Experiences of Armenian Children during the Genocide" as presented at the Istanbul conference and spoke about the other Istanbul conference panelists, their backgrounds and presentations.

Next was Arda Melkonian, also an

this gave the audience a sense of what it was like to be in Turkey, as a descendant of Armenian Genocide survivors, talking openly about the Armenian Genocide. A robust question and answer session with the audience concluded the evening's program.

The growing discussion of the Armenian Genocide in Turkey is part of a pattern of breaking taboos, especially over the last eight years, as the first academic conference on the 1915 Armenian Genocide in Turkey took place in 2005. Since then, more and more scholarship on the Armenian Genocide has emerged within Turkey, which has brought with it another dimension: the discovery of hidden or 'Islamized Armenians.'

## Make a Difference Two Feet at a Time

YEREVAN -- Share-a-Pair, a project of The Paros Foundation's 100 for 100 Projects for Prosperity distributed more than 50,000 shoes to children in need in Armenia and Nagorno Karabakh this year.

"In its third year, Share-a-Pair has successfully distributed more than 75,000 pairs of new shoes and almost 1,000 pairs of warm winter boots to children in need," said Peter Abajian, Executive Director of The Paros Foundation. "This has been particularly exciting because we have been able to engage hundreds of volunteers from around the world during our various distributions."

In 2013, shoes were distributed to children in need, in more than 90 rural communities. Distributions were also made to children in boarding schools, kindergartens, orphanages and through other non governmental children's organizations.

Helping meet the need of an impoverished child with a well-fitting pair of new shoes appropriate for school or play, improves their health and development. New shoes are costly and often times pose a financial hardship for parents of multiple children. Throughout the process, both children and their parents expressed their thanks for this bit of relief.

Through our partially funded Healthy Teeth Project, dental hygiene products were distributed to almost 2,000 children in select rural commu-

nities. SERVICE-Armenia 2013 participants both distributed the products and provided instruction on their proper usage.

Our partner, Focus on Children Now spearheaded shoe distributions throughout needy communities in Nagorno Karabakh. Ambassador John Heffern, US Ambassador to Armenia and the US Embassy's Helping Hands group joined with our SERVICE Armenia 2013 Participants to distribution shoes to children in rural communities.

A video report on this completed project can be seen at [www.parosfoundation.org/shareapair2013](http://www.parosfoundation.org/shareapair2013).

The Paros Foundation expresses its sincere appreciation to the donors, the Unison, NGO supporting people with special needs, Focus on children now, Ambassador John Heffern, the Helping Hands group at the US Embassy in Armenia, the Paros Foundation's SERVICE Armenia 2013 participants and all the other volunteers that joined this important effort.

Share-a-Pair's Operation Winter Boots continues to accept donations. A \$20 contribution will provide a child in need a new pair of warm winter boots. The Paros Foundation underwrites all administrative expenses allowing 100% of donor contributions to go directly to this project. To sponsor a project of the Paros Foundation's 100 for 100 Projects for Prosperity, please visit [www.parosfoundation.org](http://www.parosfoundation.org).

## European Court:

### Armenian Genocide Denial No Crime

Continued from page 1

tendency" and did not contribute to the historical debate.

Elaborating on the jurisprudence of the case, the ECHR said the existence of genocide, which is a precisely defined legal concept, was not easy to prove.

It also expressed its doubt that there could be a general consensus on the issue, given that historical research was by definition open to discussion and a matter of debate, without necessarily giving rise to final conclusions or to the assertion of objective and absolute truths.

Furthermore, the ECHR ruled that states that have not enacted

laws imposing criminal sanctions on individuals questioning the official view on the issue are "mindful that one of the main goals of freedom of expression is to protect minority views."

Perinçek was handed an aggravated life sentence in the Ergenekon coup plot trial, as part of the Ergenekon network, which was ultimately acknowledged by the court as a terrorist organization that had attempted to overthrow the government.

The latest judgment is not final, as any party may request that the case be referred to the ECHR's Grand Chamber for a three-month period after the verdict.

## Sevan Nisanyan Sentenced to Two Year Prison

Continued from page 1

helped turn the village of Sirince into a booming holiday spot after he bought several ruined Greek houses and turned them into hotels.

Nisanyan's conviction over his September 2012 blog post defending the anti-Islam film that ridiculed the Prophet Muhammad had sparked outrage among right groups.

"Mocking an Arab leader who centuries ago claimed to have contacted God and made political, financial and sexual benefits out of this is not a crime of hatred. It is an almost kindergarten-level test of what is called freedom of expression," Nisanyan had written.

Prosecutors accused him of

"overstepping the boundaries of freedom of speech and criticism" and said his article served to "disturb public order."

"When I attacked the Islamist establishment they felt I overstepped my boundaries," Nisanyan told CNN. "Here I am an Armenian doing something no Armenian has done in a Muslim country. This is really the height of boldness, of impudence. This is something you are not supposed to do."

Turkey has long been criticized for a lack of press freedom and dozens of journalists are in detention, accused of plotting against the Islamist-rooted government or having links with outlawed movements such as the Kurdish rebels.

# ԱՆԱԽՆԸՆԹԱՑ ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ ՍԸ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

## Գ. ՄՈՒՈՅԵԱՆ

Անկեղծ ըլլալու համար խոստովանիմ որ վերապահ քայլերով եւ վարանումով գացի անցեալ Չորեքշաբթի, Դեկտեմբեր 11ին, 2013, Հոլիվուտի Տաղլեան Մշակութային կեդրոնի հանդիսասրահը: Զարմանքս մեծ եղաւ, երբ տեսայ աւելի քան 300 հոգի լեցուցած էին սրահը: Բոլորն ալ եկած էին հաղորդակից դառնալու իրենց արմատներուն, լսելու ականատեսի վկայութիւններ եւ դիտելու վաւերագրական ֆիլմ մը, Արեւմտեան Հայաստանի երբեմնի հայաբնակ քաղաքներու եւ մեր աննման լեռնաշխարհի, արօտավայրերու, գետերու, լիճերու, բերդերու, վանքերու եւ եկեղեցիներու մասին:

Բացման հակիրճ խօսքով հանդէս եկաւ հանրածանօթ ամուսնաբոլոր շարունակ ֆոտոլեան: Արդարեւ ինք, անցեալ Սեպտեմբերին զբօսաշրջիկներու խումբ մը գլխավորելով եւ ամենարդիական նկարահան գոր-

որուն անպայման կ'ընկերակցէին ֆիլմի հեղինակ շնորհալի ամուսնաբոլոր Յարութիւն Ֆոտոլեանի գեղահայտ ձայնով եղած պատմական շահեկան ծանօթութիւնները:

Պոլիսէն ետք հանրակառքը մեզ կը փոխադրէ Կապադովկիա, ուր առաջին քրիստոնեաները հալածանքներէ խուսափելու համար, բնակած են բլուրներու ժայռափոր անձաւներու մէջ: Ատանան կը դիտենք «Կոտորած անգութ» երգի հնչիւններու տակ: Բացատրութիւն կը տրուի 1909ի ահաւոր Զարդի մասին, որուն զոհ գացին աւելի քան 30,000 հայեր: Տեսանք քաղաքի երբեմնի հայկական թաղամասէն դեռ կանգուն մնացած հին տուներ, եկեղեցի: Ափսոս այդ բոլորին:

Կ'անցնինք Ալնթապէն եւ ապակի լիկիոյ դալարագեղ դաշտերէն... մեր ականջին կը հնչէ «...աշխարհ որ ինձ հետուր արեւ...»: Ահա Սիսը, երբեմնի հայ թագաւորներու եւ Կաթողիկոսներու ոստանը: Քիչ անդին Զէյթուն, Մարաշ, հե-



ծիքներով բեռնաւորուած՝ մեկնած էր դէպի Թուրքիա: Իր ելույթին մէջ Յ. Ֆոտոլեան պարզեց շրջապատյալ նպատակը, որ նախապէս լաւ մը ծրագրուած ըլլալով կը միտէր 18 օրուան ընթացքին առաւելագոյն վայրեր աչցելու գոհացնելու համար ուղեկցողներու հետաքրքրութիւնը:

Վերոյիշեալ պատմա-վաւերագրական ֆիլմի ցուցադրութեան առաջին վայրկեանէն սկսեալ մենք զմեզ գտանք արհեստավարժ նկարահանողի, վարպետ բեմադրիչի եւ կարծէք ամերիկեան մեծանուն սթիւտիոյի մը արտադրութեան առջեւ: Բոլորս մագնիսացած սկանք դիտել ուղեւորներու օղանաւէն էջքը, Պոլսոյ Հայոց Պատրիարքարանն ու Շիշլիի գերեզմանատունը: Այս Սոֆեան: Անուանի ճարտարապետ Պալեան եղբայրներու կառուցած պալատներն ու մզկիթները, առանց մոռնալու Իսթանպուլի հին ու նոր կամուրջներն ու նշանաւոր գոց շուկան: Հապա՞ հրաշագեղ Ուփորն ու հայաբնակ Գնալը կղզին: Այս բոլորը մեզի կը հրամցուէր տեսա-լսողական արդիական բարձրագոյն մակարդակի գունաւոր ժապաւէնով մը,

րոտական Հաճընն ու տակաւին շատ ուրիշներ: Յուզիչ էր Աղեքսանտրէթը իր կանգուն մնացած եկեղեցիով ու քահանայով: Պէյլանն ու շրջակայքը, Սովուք Օլուքը, Մուսա Լեռնն ու Անտիոքը ուր տակաւին կը գործէին խումբ մը հայեր, միշտ վառ պահելով մեր ազգային աւանդութիւնները:

Զէր անտեսուած Տիգրանակերտ քաղաքը (Տիարպէթի) իր վերանորոգուած Ս. Կիրակոս ընդարձակ եկեղեցիով: Հետաքրքրական էր եկեղեցիի ժամկոչին հարցազրոյցը՝ քանի մը բառ հայերէնով եւ ապա շարունակութիւնը թրքերէնով: Իր հայրը մեծ եղեռնէն մագապուրծ ազատած էր ու յետագային ամուսնացած քիւրտ աղջկայ մը հետ:

Նկարահան եւ մեկնաբան Յարութ Ֆոտոլեան իր երկու ժամուան կարճամեթրաժ վաւերագրական այս ժապաւէնով կարծէք կախարդական գորգի վրայ նստած մարդու նման մեզ տարաւ մեր պապերի երազային վայրերը: Շարքը շատ երկայն է Մերսինէն Տարսոն, Կորիկոսի բերդէն Սովուք Օլուք եւ Եդեսեան (Ուրֆա), Վանայ լիճն ու Ախթամարի կղզիի



Սուրբ Խաչ Եկեղեցին, աւերակ դարձած Վարազայ վանքն ու գեղատեսիլ Բերկրի ջրվէժը: Մեծ յուզումներով ու ապրումներով դիտեցինք Մասիս սարն ու Կարսը որ 10րդ դարուն եղած էր թագաւորանիստ քաղաք, իր միջնաբերդով եւ հռչակաւոր Առաքելոց եկեղեցիով:

Ֆիլմն իր աւարտին մօտեցած էր երբ կարօտակէզ սիրտով դիտեցինք մեր նախնիներու երբեմնի մայրաքաղաք Անիի աւերակները, որ սահմանամերձ Կիւմրի քաղաքէն 30 քիլոմետր հեռու է, Ախուրեան գետի ափին: Անիին նուիրուած հոգեյոյզ երգի ընկերակցութեամբ տեսանք Բագրատունիներու կողմէ հաստատուած մայրաքաղաքի բազմաթիւ աւերակները, Մայր Տաճարը, որ հայկական ճարտարապետութեան իր ինքնուրոյն ոճով կը նկատուի այդ ժամանակաշրջանի ճարտարապետութեան փառքը: Հոյակապ կոթողներ էին նմանապէս Անիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ ինչպէս նաեւ՝ Փրկիչի եւ Ապու Ղամրենցի եկեղեցիները, շրջանի պարիսպներն ու կամուրջներու մնացորդները, որոնք աւաղ քար ու քանդ եղած են, Սելճուկներու արշաւանքներուն եւ 14րդ

դարու կործանարար երկրաշարժին պատճառով:

Մենք հապճեպ կերպով թուեցինք նկարահանուած վայրերը, բայց չէինք կրնար թուղթին յանձնել այն անբացատրելի ապրումներն ու տեսա-լսողական արդիական սարքաւորումներու շնորհիւ հնչիւնային ու գեղարուեստական բարձր կատարողականութիւնը, զոր մեծ բժախնդրութեամբ ու կատարելութեամբ մեզի հրամցուց Յարութիւն Ֆոտոլեանը:

Այս բոլորի վարձատրութիւնն ու գնահատակա՞նը՝ բազմահարիւր ներկաներու երկարատեւ եւ որոտընդոտ ծափերն էին:

Արդարեւ սոցն ֆիլմը կարելի է անվարան ցուցադրել ոչ միայն հայկական հեռուստատեսութեան, այլեւ զայն ներկայացնել նոյն բնույթի միջազգային փառատօներու:

Վերոյիշեալ ֆիլմը արուեստի բնագաւառէն ներս նոր եւ չաջող ոստում մըն էր Յարութիւն Ֆոտոլեանին համար:

Տ. Մանուկ Աւ. Քահանայի խորհուրդական եւ շնորհակալական խօսքերով վերջ գտաւ սոցն շահեկան երեկոն:

Վարձքը կատար:

**ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԲԱՐԻ ԿԱՄԵՅՈՂՈՒԹԵԱՆ ՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԲԱՐԻՔԸ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՎԱՅԵԼ ԴԵ, ՄԵՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒ ՆԻԹԱԿԱՆ ՕԺԱՆԳԱԿՈՒԹԵԱՄԲ ԶՕՐԱԿՅԵԼՈՎ ՍՈՒՐԻԱԶԱՅ ՏԱՈՒՊՈՂ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՅՆԵՐՈՒՆ:**

THE FOLLOWING CHURCHES, CHARITIES AND ORGANIZATIONS CAME TOGETHER TO FORM SARF: ARMENIAN CATHOLIC EPARCHY IN NORTH AMERICA; ARMENIAN EVANGELICAL UNION OF NORTH AMERICA; WESTERN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH; WESTERN PRELACY OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA; ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION; ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA; ARMENIAN RELIEF SOCIETY OF WESTERN U.S.A.; ARMENIAN DEMOCRATIC LIBERAL PARTY; ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION-WESTERN U.S.A.; AND SOCIAL DEMOCRAT HURCHAKIAN PARTY-WESTERN U.S.A.

**DONATE**  
syrianArmenianReliefFund.org

Yes, this Christmas, I like to help the struggling Syrian Armenians

«Այո, նոր տարուան եւ Ս.Մանուկի առթիւ, պատուեց կը նուիրել իմ «բաժան» գրասենյակը սպասարկի միջ ժաջարակ Սուրիանայի հայերէն»

Mail your tax-deductible contribution to SARF: P.O. BOX 1948, GLENDALE, CA 91209-1948

FIRST NAME \_\_\_\_\_ LAST NAME \_\_\_\_\_  
STREET ADDRESS \_\_\_\_\_ CITY \_\_\_\_\_ STATE \_\_\_\_\_ ZIP CODE \_\_\_\_\_  
DAYTIME TELEPHONE NUMBER \_\_\_\_\_ E-MAIL ADDRESS \_\_\_\_\_  
ENCLOSED, PLEASE FIND MY CONTRIBUTION OF: \$ \_\_\_\_\_

# ԶՐՈՅՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄ «ՀԱՅԱՏԱՌ ՄԱՍՈՒԼԻՆ ԴԻՄԱԳՐԱԻԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ՆԻԹԹԻՆ ՇՈՒՐՁ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիրակի, 15 Դեկտեմբեր 2013, երեկոցեան ժամը 7:00-ին, Նիկոսիոյ Ազգային առաջնորդարանի «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հետաքրքրական Զրոյց-Քննարկում, ընդհանուր նիւթ ունենալով՝ «Հայաստան Մամուլին Դիմագրաւած Խնդիրները»: Զեռնարկը նուիրուած էր Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկեւեանի մամուլ-հրատարակչական գործունէութեանը 25-ամեակին, որոնց մէջ յատկապէս՝ «Արծիւ» ամսաթերթի եւ «Գառնի» մատենաշարի խմբագրական աշխատանքները: Զեռնարկը կազմակերպուած էր կիպրահայ հայաստան մամուլի օրկաններուն, ի մասնաւորի Պրն7 Հրայր ձէպէճեանի կողմէ, եւ կը վայելէր հովանաւորութիւնը՝ կիպրահայ Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանի, ինչպէս նաեւ ներկայութիւնը՝ հայ մամուլով հետաքրքրուող ազգայիններու:

Բացման խօսքով հանդէս եկաւ Պրն7 Հրայր ձէպէճեան, շեշտելով յատկապէս, որ Սփիւռքահայ մեր կեանքին մէջ, հայաստան մամուլը՝ տեղեկատուական այլ միջոցներուն մէջ, բացառիկ նշանակութիւն ունեցեր է՝ հայապահպանման մեր ճիգերուն մէջ, հայ ընտանիքին, հայ դպրոցին եւ հայ եկեղեցիին, ինչպէս նաեւ միութեանց եւ ակումբներու կողքին: Ան անդրադարձաւ որ ներկայիս, համացանցը հնարաւորութիւն կ'ընձեռէ որ մամուլը աւելի լայն հաղորդակցութեան դաշտ ունենայ եւ յետագարձ կապ ստեղծուի ընթերցողին եւ մամուլին միջեւ: Ապա ան ներկայացուց օրուան գեկուցաբերներն ու նիւթերը: Յաջորդաբար խօսք առին՝ Դոկտ. Արտա ձէպէճեան՝ «Հայաստան մամուլին դերը հայ լեզուի եւ մշակոյթի պահպանման մէջ» նիւթին շուրջ, Տիկ. Երան Գուլումճեան՝ «Հայաստան մամուլը եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ամբողջացումը» նիւթին շուրջ, Պրն. Ահարոն Շիրազմեան՝ «Հայաստան մամուլը եւ Յեղասպանութեան պահանջատիրութեան հոլովոյթները» նիւթին շուրջ եւ Պրն. Արթօ Դաւիթեան՝ «Կիպրահայ հայաստան մամուլը-ազգային մշակութային եւ ինքնութեան պահպանման ներկայի եւ ապագայի գործօնները» նիւթին շուրջ:

Դոկտ. Արտա ձէպէճեան շեշտը դրաւ առաւելաբար այն կարեւոր իրականութեան, որ մամուլը վերապրելու գաղափարախօսութիւն մըն է, որ կ'ընդգրկէ՝ լեզուապահպանման, յատուկ ինքնութեան, միասնականութեան, պատմական հաւատարմութեան եւ փայլուն ապագայի հեռանկարի պահպանման գործօնները: Ան աւելցուց, որ հայ մամուլը հայ ժողովուրդին համար դարձաւ՝ մշակութային, ազգային եւ աստուածատուր այբուբենին վերապրումի խորհրդանիշ: Ան յատկապէս նշեց. «Հայ մամուլի հիմնադրութիւնը մեծապէս սատարեց

արմատախիլ եղած հայ ժողովուրդին, որ կարիք ունէր կարեկցութեան եւ հարազատութեան՝ պանդխտութեան օրերուն՝ առաջնահերթ դասելու հայոց լեզուն, վերակազմաւորուելու եւ վերահաստատելու իրենց ազգային միասնականութիւնը»: Իր խօսքի աւարտին, Դոկտ. Արտա ձէպէճեան ցաւ յայտնեց, որ այսօր, Սփիւռքի տարածքին, սերունդ մը մէջտեղ կու գայ, որ չի գիտեր հայերէն գրել, կարդալ եւ խօսիլ: «Անոնք պիտի կորսնցնեն ազգային ինքնութիւն, ազգային մշակոյթի սէր, պատկանելիութիւն եւ պատմական հասկացողութիւն», շարունակեց ան, եւ այս առումով, խիստ գնահատելի եւ կարեւոր համարեց հայ մամուլի, «օրինակ «Ազգակ»ի, «Էրեբունի»ի, «Ազատ Խօսք»ի, «Կիպրահայերու համացանցի օգտագործումը, որ նաեւ կը ստեղծէ համասփիւռքեան հաղորդակցութեան ցանց մը, եւ Միջին Արեւելքի հայկական գաղութները յուզող եւ ուրախացնող լուրերու փոփոխութիւնները»:

Տիկ. Երան Գուլումճեան սահմանեց մամուլին եւ լրագրողին գերագոյն առաքելութիւնը, ըսելով. «Արթնցնել հայ հանրութիւնը՝ անոր անտարբերութեան, ինքնախաբէութեան եւ ստրկամտութեան թմբիրէն, զայն ազատագրել իր քարացած կարծրատիպերէն եւ զայն մղել խորունկ ինքնաճանաչման»: Ան աւելցուց որ ընթերցողին հետ սիրտէ-սիրտ, հոգիէ-հոգի անկեղծ, ճշմարիտ, անկաշկանդ այլեւ պատասխանատու խօսքն է, որ անմիջապէս կը կապէ ընթերցողը մամուլին եւ՝ փոխադարձաբար, աւելցնելով որ ազատ եւ յանձնառու մամուլը պարտի մինչեւ վերջ անկեղծ ըլլալ իր խօսքին մէջ, քանզի՝ «ճիշդ փոխանցումն է որ կրնայ դարձանել մեր ազգային-հաւաքական վէրքերը, եւ որ վէրքը ծածկելը ջայլամային վարքագիծ է պարզապէս, որ միայն ինքնախաբէութեան կրնայ առաջնորդել մեզ»: Անդրադառնալով Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն, ան կարեւորեց Հայրենասօգնութեան սրբազան նպատակը, որուն սատարեր էր Սփիւռքը լիաբուռն, հաւատալով որ անկախ պետականութիւնն է որ կ'երաշխաւորէ հայութեան լինելութիւնը, անոր անկատար իղձերուն եւ երազներուն կենսագործումը: «Սփիւռքը Հայաստանով կ'ըլլայ զօրաւոր եւ՝ փոխադարձաբար»: Ան մանրամասնօրէն նշեց այն խոչընդոտները, որոնք կան՝ Հայաստան-Սփիւռք բաղձալի համագործակցութեան, ուժերու եւ կարելիութեանց միաւորումին դիմաց, կարեւոր համարելով այդ խոչընդոտները վերացնելու խնդիրը: Իր խօսքի աւարտին, ան յատկապէս ըսաւ. «Հայ մամուլին կարեւորագոյն առաքելութիւններէն մէկն է՝ «Հայաստան-Սփիւռք իրա՛ւ միասնականութեան, մէկ ու միասնական հայութեան խորհուրդին, տեսլականին նպատակը», որուն իրագործման ճամբուն վրայ,

շարունակեց ան՝ «հական է փոխանշել զայն խոչընդոտող ազգային մեր ցաւերը, դարմանումներ առաջարկելով անոնց համար, սթափ հայեացքով, գիտակից անկեղծութեամբ, յանդուգն ճշմարտախօսութեամբ...»

Միասնականութիւն՝ որ հիմնուած ըլլայ ազգային մէկ գաղափարախօսութեան, հոգեւոր-մշակութային արժէքներու միեւնոյն համակարգին վրայ»:

Պրն Ահարոն Շիրազմեան, Պէյրութին յատկապէս հրաւիրուած, պատմականը ըրաւ հայ մամուլի անցած ուղիին, «Ազգարար»էն մինչեւ մեր օրերը, շեշտելով որ Յեղասպանութենէն ետք, տասնամեակներ շարունակ, հայ մամուլը Սփիւռքի մէջ իր ներուժը վատներ էր խորհրդային Հայաստանի նկատմամբ թեր կամ դէմ դիրքորոշումներով: Յեղասպանութեան արծարծումը գերազանցօրէն թափ հաւաքեր էր Եդեոնի Յիսունամեակին եւ անկէ ետք, երբ Հայաստանի մէջ թէ Սփիւռքի տարածքին, հայ մամուլով թէ գիրքերու հրատարակութեան կիրակէտը: Սակայն տասնամեակներ շարունակ, Հայոց վրայ գործադրուած Յեղասպանութեան ճանաչման գործընթացը դարձեր է մեր Պահանջատիրութեան կորիզը, ինչ որ միայն բարոյական բնոյթ ունի եւ ոչ քաղաքական, շեշտեց ան: Իսկ հիմա, նշեց Պրն. Շիրազմեան, Յեղասպանութեան Հարիւրամեակին ընդ առաջ, հայազգույթներու մէջ կը կազմուին յատուկ Յանձնախումբեր, ձեռնարկներ տեղի կ'ունենան՝ քարոզչական, մշակութային եւ այլն, սակայն չունինք միասնական իրաւական ծրագիր, մեր պահանջատիրութեան հետապնդման ուղղութեամբ, ինչ որ կրնայ յանգիլ՝ ծաղիկապակներու գետեղման միայն մեր Նահատակներու շիրիմին...: Իսկ ՀՀ պետականութիւնը, շեշտեց ան, երբեք Տէր չեղաւ մեր Պահանջատիրութեան, հոգային հատուցումի պահանջին...»

Պրն. Արթօ Դաւիթեան նշեց այն բոլոր հայկական թերթերու անունները՝ իրենց հիմնադրումի եւ փակումի թուականներով, որոնք լոյս տեսեր էին Կիպրոսի մէջ, ժամանակ առ ժամանակ: Ան մասնաւորաբար շեշտեց, որ ապագան շատ փայլուն է հայ թերթի ապագային համար, մեր կողքին ներս, քանի որ երիտասարդները

չեն հետաքրքրուած հայերէնով, հայ գիրով, մամուլով թէ գիրքով... աւելցնելով յատկապէս, որ անոնք նոյնիսկ իրենց առօրեայ խօսակցութեանց մէջ, սկսած են մտածել յունարէն կամ անգլերէն լեզուներով եւ տակաւ կը հեռանան հայերէն լեզուամտածողութենէն: Ներկայիս, հայ թերթի ընթերցողը միջին տարիքէ վեր է, ընդգծեց ան, իսկ թերթի հրատարակութիւնը գործն է առաւելաբար անհատական նախաձեռնութեան, հաւատքի, հոգիի տենչի կամ երազի: Չկայ նաեւ նիւթական ներդրում հայ թերթի յարատեւութեան ի խնդիր եւ հարց կը յառաջանայ, նշեց ան, թէ ասկէ մէկ-երկու տասնամեակ ետք, պիտի ունենա՞նք արդեօք Կիպրոսի մէջ լոյս տեսնող հայ թերթ, մասնաւորապէս անոր համար նաեւ որ նոր սերունդին մօտ, չկայ այդ փափաքը, երազը՝ խմբագիր կամ հրատարակիչ դառնալու:

Կարճատեւ հարցում-քննարկումէ ետք, Պրն Հրայր ձէպէճեան բարձր գնահատեց գեկուցաբերներուն աշխատանքը, միաժամանակ դրուատելով յատկապէս Թեմիս կաթ. Փոխ. Տէր Վարուժան Արքեպիսկոպոսի մամուլը եւ հրատարակչական քառորդ դարեայ բեղուն գործունէութիւնը, որուն ընթացքին ան քառասուն անուն գիրք հրատարակեր էր «Գառնի» հրատարակչութեամբ, խմբագրեր էր եւ կը շարունակէ հրատարակել «Արծիւ» պարբերաթերթը, նպատակելով հայ գիրին, մամուլին եւ հայ մշակոյթին: Ան նաեւ գեղեցիկ խորհրդանշական յուշանուէր մը յանձնեց Սրբազանին այս առիթով:

Ներկաները նաեւ առիթը ունեցան՝ համացանցային սարքով, դիտելու Սփիւռքի նախարար Տիկ. Հրանտէ Յակոբեանի գնահատական խօսքը ուղղուած հայ մամուլին, լրագրողներուն եւ խմբագիրներուն, եւ յատկապէս Վարուժան Արքեպիսկոպոսին, անոր քառորդ դարեայ արդիւնաշատ անխոնջ նուիրումին՝ հայ գիրին, գիրքին, մամուլին, հայ մշակոյթին:

Իր եզրափակիչ խօսքին մէջ, Վարուժան Արքեպիսկոպոս ընդգծեց որ պէտք է յոռետեսական ըլլալ ապագային համար եւ պատգամեց որ ամէն մարդ իր գործը պէտք է ընէ առանց յուսահատելու: «Խաւարը անիծելու տեղ, մոմ մը վառէ՛», ըսաւ ան: Հուսկ, Պահպանիչով վերջ գտաւ այս հետաքրքրական, մտորելու, մտածելու առիթ տուող ձեռնարկը:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country:-----

Tel :----- Fax :-----



### ՉԿԱՅԱՑԱԾ ԵՐԿԻՍՕՍՈՒԹԻՒՆ ԼԵՌԻ ԿԱՄԱՐ ԱՐԱՍ ՊԱՊԻՍ ՅԵՏ

Լեռ Կամսար - Միշտ ու ամէն տեղ միեւնոյն հետեւանքները, միեւնոյն պատճառէն յառաջ կուզան:

Եթէ մեր «անկուսակցական» ինտելիգենցիան անմիջապէս ծունկի չի գար կոմունիստական կուռքի առաջ եւ յամառէր այնպէս, ինչպէս Գրիգոր Լուսաւորիչը յամառեցաւ Տրդատին ժամանակ, անկասկած Լուսաւորչին նման գլխիվայր պիտի կախուէր, յետոյքին ձագար դրուէր եւ քացախ ընդունէր իր ներսի դին: Ո՞րն է խելօքութիւնը եթէ հարցնես:

- Հարկա՛ւ, մեր ինտելիգենտներու ըրածը: Գաղափարը ինչ արժէ հիմա, յետոյքը պէտք է փրկել, յետոյ՛քը:

Վանուհի Թովմասեան-Փաստօրէն յետոյք փրկելու բանաձեւը գիտէիր, պա՛պ, արժէ՞ր ամբողջ կեանքդ մոռնոցով ապրէիր:

Լեռ Կամսար - Թէեւ օրէնք չէ ինքզինքը հաւանել, բայց ես, որ ոչ մի օրէնք չեմ ճանաչում, ամէն հայելի նայելիս հիանում եմ ինձանոյ:

Ես շոյում եմ ինձ եւ ասում:

- Ապրե՛ս, տղաս, երբեք սովետական գրողներին չնմանուես, նրանք ստով հարիւր հազարներ են դիզում ու միս մսից կախում, դու անկուպեկ քաղցում ես՝ որ ճշմարտութիւնը գրես: Կ'անցնի ժամանակ, նրանց մարմինը հողում կը փտի, ու գրուածքները հողի երեսին քամին կը տանի ու հրդեհուած փայտէ տան նման նրանցից ոչինչ չի մնայ, անգամ յուշ, հակառակ գիտական այն թէգին, որ ասում է՝ «Աշխարհիս մէջ ոչինչ չի կորչի անհետ»: Ճշմարիտ լինելու համար՝ գիտութիւնը պիտի աւելցնէր՝ բացի սովետական գրողների երկերից: Իսկ իմ երկերը կը կարգայ ապագայ մարդկութիւնը եւ կ'ասի. Ահա՛ քեզ մի գրող, որ կոմունիզմի քարը քարին չթողեց...»:

Վ. Թ.- Հա՞ որ: Ասում ես յոյսա չկտրե՞մ: Բայց ե՞րբ: Մօտակայ հարիւր տարում կը լի՞նի քեզպէսների գնահատումն ու արժեւորումը՝ մը՛ գէթ յետմահու: Թէ՛ չէ՛ մրցանակներ են տալիս աչքը կուշտ այնպիսի մտաւորականների, որ բեզարել էին արդէն լեւինեան ու ստալինեան մրցանակներ ստանալուց:

Է՞, ես չէ, դու՛ ասա, ստալինեան մրցանակ ստացողը լալաղ կ'անի Անկախ Հայաստանի ինչ- որ Մեսրոպ Մաշտոց մրցանակների: Մարդս քթածակ ունենալու է: Նախ պէտք է պնդէիր քո տեղ արեւի տակ, յետոյ՛ միայն փորձէիր ժողովուրդի համակրանքը շահել: Բայց դրանք դատարկ-մատարկ բաներ են: Էդ բոլորը հէջ, դու էն ասա, ինչո՞ւ այսպէս սաստիկ ատում էիր կոմունիստական կառավարութեանը, ինչո՞ւ է վատ հաւասարութեան սկզբունքը:

Լ. Կ. - Ոչ միայն «հաւասարութիւնը», այլեւ բոլոր սկզբունքներն էլ լաւն են, եթէ մարդը դաւանում է իր ազատ կամքով եւ ոչ բռնութեամբ: Ինչպէ՞ս կարող է բռնի հաւասարութիւնը ցանկալի լինել:

Վ. Թ. - Քեզ համարում էին չարախիղճ երգիծաբան, ասելով, որ կոմկուսակցութեան գործած սխալները ոչ թէ ցաւ էին պատճառում քեզ, այլ ուրախացնում էին, դրա համար էլ անցանկալի հեղինակ էիր:

Լ. Կ. - Նախ եւ առաջ երգիծա-

բանը ծեփագործ չէ, որ նրանց կեղտոտ պատերը ճերմակացնէր, երկրորդ՝ նրանց կուսակցութեան գործած սխալները այնքան շատ էին, որ եթէ իւրաքանչիւրի վրայ ցաւէի, պիտի հիւանդանոցում պառկած լինէի, որովհետեւ այսքան ցաւի ոչ մի օրգանիզմ չի դիմանայ: Երրորդ՝ ես սաստիկ պիտի ցաւ չգզայի եթէ նրանք մարդկանց բարիք գործելու ասպարէզում սխալուէին: Օրինակի համար, եթէ ժողովրդին ազատութիւն տալ աշխատէին: Իսկ նրանք կապել, կաշկանդել էին մարդկանց ձեռքն ու ոտքը, նաեւ լեզուն: Ցաւել նրանց սխալների վրայ՝ նշանակում էր ցուցմունք տալ իրենց կապելու նաեւ մարդու այն միակ անդամը, որ պատահամբ վրիպել էր նրանց ուշադրութիւնից...

Վ. Թ. - Քո գրուածքներում առկայ է դաշնակցական գաղափարախօսութիւնը... Դա վկայում է այն փաստը, որ նրանց իշխանութեան ժամանակ մամուլը ողողուած էր քո ֆելիետոններով:

Կ. Լ. - Ես որ դաշնակցական թերթերում գրում էի՝ դաշնակ չէի, յետոյ էլ, որ բոլշեւիկների թերթում էի գրում՝ բոլշեւիկ չէի. ես կանգնած էի բոլոր քաղաքական կուսակցութիւններից հաւասար հեռաւորութեան վրայ: Կոմունիստների թերթերում գրելու ծաղրել եմ այն թափով, ինչ դաշնակցականներին էի ծաղրում իրենց թերթերում:

Վ. Թ.- Իսկ որպէս երգիծաբան գրող ի՞նչ կարծիք ունես քո մասին:

Լ. Կ. - Շատ մեծ կարծիք: Ինձ ոմանք համարում են Պարոնեանի աշակերտ, բայց ես ինձ համարում եմ ամէն տեսակ դպրոցներ աւարտած մարդ: Պարոնեանը գրել է «քաղաքավարութեան վնասների» մասին: Բաւական է, որ մարդիկ «անքաղաքավարի» դառնան՝ նրա դերը կը վերջանայ: Իսկ ես գրում եմ այնպիսի «վնասների» մասին, որոնք յաւիտենական են ու բնաւ չեն վերջանում: Որով յոյս ունեմ, որ իմ գրուածքները կը կապեն ինձ յաւերժութեան հետ, եւ, ամօթ է ասել՝ ես մի փոքր... կարող եմ անմահանալ:

Վ. Թ.- Քո արժէքը դու աւելի լաւ կ'իմանաս, բայց չափից շատ ես գրում սովետական կառավարութեան թերթերում գրելու մասին, կոմունիզմը մի հիւանդութիւն էր, որ վաղ թէ ուշ պիտի վերանար աշխարհից, ժամանակաւոր բանի վրայ կարելի՞ էր այսքան ծանրանալ: Եւ վերջապէս միշտ միեւնոյնը կրկնելով, վերջիվերջոյ կարող ես քննցնել քո ընթերցողներին:

Լ. Կ. - Նախ եւ առաջ ես միեւնոյնը երբեք չեմ կրկնում: Ինչպէս աշխարհի երկու միլիարդ մարդկանց մէջ չկայ մի կերպարամք, որ կրկնութիւնը լինի միւսի, այնպէս էլ իմ բերած թերթերում գրելու մէջ չկայ երկուսը, որ հեռաւոր նմանութիւն իսկ ունենան իրար: Բոլշեւիկների գործած չիմարութիւնները այնքան մէկը միւսից տարբեր են, այնքան նոր, այնքան ապշեցուցիչ, որ զարմանում ես. մի՞թէ աշխարհումս այսքան չիմարութիւն է գոյութիւն ունեցել:

Վ. Թ. - Քո կեանքի ընթացքում տեսել ես մի քանի իշխանութիւն-

### ԱԲԵՏԻՔ ԻՍԱՅԱԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՄԻԱԿ ՍԻՐՈՒՆ ՇՈՒՇԱՆԻԿԻՆ

Նորից վեր եմ առնում գրիչս, թաթախում եմ հիանդ, արիւնոտուած սրտիս մէջ եւ գրում եմ քեզ, Շուշիկ, մի քանի տող, գրում եմ ես՝ Աւետիք Իսահակեանս:

Ինչո՞ւ եմ գրում, ի՞նչ է ստիպում ինձ գրել,- սիրելի- ես քեզ չեմ սիրում, ատելի- ես քեզ չեմ ատում, բայց դու իմ հոգում կաս՝ որպէս մի ծանր երազ, որպէս մի դժբախտութիւն, մի կոշմար. ես ուզում եմ քեզ յօշոտել, ես ուզում եմ քեզ հազար-հազար անգամ սպանել, սպանել, նորից սպանել, կենդանացնել՝ նորից սպանել. յաւիտեան ապրել, եւ քեզ յաւիտեան սպանել, բայց այդ չեմ կարող անել (անգոր եմ ես), ամբողջ հուժիւնս բարի է- եւ որ ամենաողբալին է՝ ես դեռ քո ճիրաններում եմ. Ի՞նչ անեմ, ինչպէ՞ս ազատուեմ. Երբեմն քեզ ատում եմ ծովաչափ, ծովաչափ, եւ երբեմն սիրում եմ եւ պատրաստ ոտքերդ համբուրելու, բայց որ չիշում եմ անցեալը, ես մըրիկ եմ դառնում:

Դու մի՛ որոնիր այս տողերի մէջ որոշ միտք, որոշ իմաստ.

Ես գրում եմ համարեա կիսախելագար, եւ մինչեւ մահս քեզ էլ ոչ մի տող գրելու չեմ, եւ աչերիդ նայելու չեմ, Աստուած է վկայ. վերջին անգամ պիտի լամ քո առաջ եւ հայհոյեմ քեզ, հայհոյեմ,- հայհոյեմ քո բոլոր սրբութիւնները, որովհետեւ դու իմ սրբութիւնները պղծեցիր, որովհետեւ իմ ամենանուիրական սէրը շան պէս դուրս վախտեցիր, որովհետեւ դու ինձ չարչարեցիր, նահատակեցիր՝ անասնամանօրէն:

\* \* \*

Բայց լալիս եմ հիմա, եւ սրտիցս արիւն է կաթում. գնա՛, Շուշիկ, Աստուած քեզ հետ, ապրի՛ր քո երեխաների համար. ինձ մի՛ անիծիր. իմ անունս երբեք, երբեք մի՛ յիշիր եւ ոչ մի տեղ, եւ ոչ մի տեղ, ոչ մի մարդու մօտ. Աղաչում եմ քեզ. ինձ թաղիր քեզ համար յաւիտեան, ինձ երբեք մի՛ նայիր. ազնիւ խօսք տուր այդպէս վարուելու. ես թող բոլորովին չեղած, չծնուած մարդ լինեմ քեզ համար: Հոգիս խորշում է, երբ մտածում եմ, որ երբեմն դու կը մտաբերես ինձ. պէտք չէ յիշել այն տաճարում մի ուրիշ Աստուծոյ անուն, որին այդ տաճարը չի պաշտում, չի «հնազանդուում». չպէտք է այդ տաճարում ուրիշ ձօնի սեղան ու պատկեր դրուի: Քո հոգու տաճարից թող ես լինեմ դուրս՝ ես օտար, չճանաչուած եմ այդտեղ...

ԱՆԱՉՈՒՄ ԵՄ ՔԵԶ...

ՆՍ ԷԼ ԿԸ ՎԱՐՈՒԵՄ ՔԵԶ

ՀԵՏ ԱՅՊՊԵՍ:

ԴՈՒ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵՌԱՄ, ՄԵՌԱՄ...

ԱՐՏԱՍՈՒԵԼՈՎ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՄ ՔՈ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՒ ԶԱՄԲԱՅ ԸՆԿՆՈՒՄ

ՆՈՐ ԱՍՏՈՒԱԾ ԳՏԵՆԼՈՒ...

«Դու ասում էիր ինձ, որ ինձ չես սիրելի- գիտեմ, գիտեմ, բայց այդ քեզ իրաւունք չէր տալիս, ինձ՝ երբ ես քու ոտքերի տակ տիեզերական հզօր սիրուցս ստորացած ընկած էի, - ծաղրելու, արհամարհելու, դուրս շարտելու. չէ որ, Շուշիկ ջան, ես մարդ էի. չէ որ, կային օրեր, որ դու ինձ գոնէ յարգում էիր, «թանկագին» եւ «ջան» խօսքերով խաղում էիր հետս - եւ այդ բոլորից յետոյ դու ինձ ոտաց տակ

տուիր. խփեցիր ջահել սրտիս մէջ դաշոյններ՝ չհանցեցիր նրանց, թողիր սրտիս մէջ- մնացին, ժանգոտուան, եւ արիւնովս իմ քայլափոխերս ծածկեցին, բայց դու մնացիր դէպի ինձ միշտ ծաղրող, միշտ անգութ, միշտ անսիրտ...

Եթէ ամենակատաղի թշնամու սիրէի, իմ, դէպի քեզ մըրկող սիրուս մի չնչին մասով, թշնամիս ինձ կը գրկէր, կը գուրգուրէր եւ կը մխիթարէր... Իսկ դու-դու գիտէիր իմ դժոխային տանջանքներս, բայց մօտ չեկար, մի անուշ խօսք չ'ասիր... Ես քեզնից էլ սէր չէի ուզում, քեզ տիրել չէի ուզում, բայց քու մէջ մարդ տեսնել կ'ուզէի, եւ որ՝ դու իմ մէջ մարդ տեսնէիր... Դու ասում էիր ինձ, որ այն ժամանակ ջահել էիր եւ ուրիշները ներշնչում էին քեզ... Բայց, բայց... չէ որ ջահելները ունեն գթաւատ սիրտ. Բայց միթէ՞ դու ջահել էիր. Դու հասած էիր՝ եւ այն էլ շա՛տ գգուելի կերպով, որ առաջին պատահող ամուսնու գիրկն ընկար...

Այո՛, մենք յետոյ բարեկամացանք, գուցէ դու յետոյ ինձ սիրեցիր, բայց այդ օրուանից ես քեզ սկսեցի ատել եւ հայհոյել. դու յետոյ ինձ սիրում էիր ոչ մաքուր կերպով, այլ ֆիզիկապէս... Ես զգում էի քեզնից. բայց եւ անդիմադրելի կերպով սիրում էի. ա՛խ, ամբողջ 13 տարի դու նստել ես ու բռնել իմ ողջ, ողջ ուղեղը, հոգին եւ սրբապղծել իմ ողջ երկիրը... Դու ինձ արնաքամ արիւր, գուցէ ակամայ, դու սպանեցիր իմ տաղանդը, դու ինձ մղեցիր ամենածանր, դառն յուսահատութեան, երբ ես ամբողջապէս թաթախուած ինքնասպանութեան ծանր մտքերով, յանկարծ սթափուեցի- ինձ դուրս կանչեց ժողովուրդը, յեղափոխութիւնը, իմ ջախջախուած գեներալ- ես տեսայ իմ աչքում բոլոր իլյուզիաները ցրուած, վարագոյրները բացուած եւ քեզ՝ որպէս ամենավատ կիներ բոլոր կանանցից... Եւ քեզ հայհոյեցի աշխարհ- քի ամենածանր հայհոյանքով, որ իմ կեանքում մի անգամ եմ ասել, եւ այն էլ քեզ, իմ հոգուն, իմ իղեալին. այժմ մագերս փետանում են եւ ամաչում եմ, եւ սոսկում եմ այդ հայհոյանքից... Եւ այն օրից, երբ գրեցի... Շուշիկ, ատելի, սիրելի Շուշիկ, ուրիշ կերպ ես չէի կարող վարուել. ես պիտի քեզ անպատուէի, վայր զցէի, որ կարողանայի ազատուել այդ հրէշային սիրուց, որ ինձ ծծեց, կամ սպանէի ինձ. սպանել չուզեցայ, որովհետեւ բնութիւնը իմ մէջ շա՛տ է կեանք եւ կեանքի կարողացայ. իհարկեւ, ակելի լաւ էր մեռնելի, քան հասնել այն օրին, որ ես իմ դարեր, դարեր պաշտած երազը սրբապղծէի, ոտաց տակ տալի... Բայց այս բոլորի միայնակ մեղաւորը դու ես:

Այժմ ի՞նչ եմ ուզում ասել ես- խօսքս հետ չեմ առնում, բայց այդ հայհոյանքով էլ չբժշկուեցի ես. դու մի սոսկավիթխար վէրք բացիր հոգուս մէջ, եւ ոչ մի երկրային ու երկնային դեղով դա չի բժշկուի... Այժմ դառնաս իմ կիներ- ես իսկոյն կը փախնեմ քեզնից. դառնաս հին Շուշիկը՝ ես կը սպանեմ ինձ՝ չտեսնելու համար տանջանքների այն ծանր շղթան, որ տարիներ ի վեր ինձ կաշկանդեց...

Աւետիք, 1904թ.

# ԱՍՏՂԻԿԻ ՈՒ ՎԱՅԱԳՆԻ ԱՍՈՒՍԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՆԴԵՍԻ ՊԱՏԱՐԱԳ

Կարծես ծնած ըլլալիք Գործի՝ ծովէն գէջ,  
Կարծես վիհիկ լոյս կաթիլներ աղի  
Դեռ կը շողայից այտերուդ գոյգ փոսից մէջ:  
Ով դու Վահագն, ով աստուածն իմ հայրերուս,  
Կը մօտեմամ ահա բագնիդ, եւ ինձ հետ  
Իր պախուրձէն Բաշխով  
Կը բերեմ ցուլ մը հովիտներէն Տարօնի:  
Աստուածայից գինովութեամբ մը գուարթ՝  
Այս օրերուն Բու ժողովուրդիդ հետ կրօն

## Դանիէլ Վարուժան

### ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿԻ ԼԱԳԻՍԵԱՆ

Պատարագիչ Վահագնի քրմապետն է գնում հարսանեկան գոյգին գրկում, ճակատները համբուրում, օծում նրանց աստուածների մեհենական կրակով: Կանչում՝

«Հարս Աստղիկ, յիշու՞մ ես, Նաւասարդին Արածանիի ափի սպիտակ վարդերի հանդում, վարդավառի տօնախմբութեանն էիր եկել եւ Աշտիշատի մեհենան ետդարձի ճանապարհին ճախրելու ժամանակ, վարդափշերը ծակեցին ձիւնոտ ոտքերդ, արիւն, արիւն հոսեց սպիտակ վարդերի վրայ... եւ կարմրեցին վարդերը, եւ այնուհետեւ վարդերը կարմիր հագան: Մեհենանը, բացատը դողում են աշխարհական ժողովուրդի ողջոյնի բացականչութիւններից: Այդպէս էր, կեանքի վայելքի արբեցումով էին պատարագում իրենց աստուածների եւ իրենց որդիների հարսանեաց հանդէսները:

Նայիրի երկրի արքան, թագուհին գալիս են Աստղիկի ու Վահագնի ճակատները համբուրում, նրանց լանջապանակներին ամրացնում տիեզերական հեռուների աստղերից իրենց աստուածների քաղած կրակ գոյներով ծիրանիների ոտեր: Ծիծաղով կանչում է՝

Աստղիկ հարս, յիշու՞մ ես Խաղի-Հայկ աստուծոյ Գերագոյն փառաց Մուսասիրի տաճարին մօտիկ հովտի գետակում լոյսի անուշ շողերը գրկած լողանք էիր ընդունում: Ոստանի պարմաններ նրա ափի բլուրին խարոյկ էին վառել, որ ձիւնոտ մարմնիդ տեսքի հրայրքով արբենային: Մշուշով պատեցիր ձոր ու դաշտ, կանչեցիր նրանց գնան իրենց Մուշ-Մուսասիր ոստան եւ որ այլեւս երբեք չէին կարող տեսնել քեզ: Կուռից յաղթանակով վերադարձած Վահագնը թող արբենայ քու լուսնկայ մարմնի տեսնանքի հրայրքով: Ո՞վ դու Աստղիկ դիցուհի, բաշխիր նրան ձնծաղիկների բոյրը՞:»

Հայաստանի Թախրիգամա թագաւորը, թագուհին գալիս են Աստղիկի ու Վահագնի առաջ: Կուռերը ունենին երկնից իջած հրեշտակատես քրմուհիները աստուածների ըմպելիք գինի են լցնում թասերին: Թագաւորը, գինիով լիքը թասը վերեւ պահած կանչում՝

Աստղիկ, Վահագն, Արմինայի այգիներում Միհրի լոյսի կրակով հաստնացած արեւահամ խաղողից քամուած այս կարմիր գինին ըմպէ՛ք, սիրոյ հուր թող փոթորկի ձեր սրտերին: Վահագն, այն թող վիշապներ խեղդելու ուժ չորդի քու յաղթ բազուկներին: Անուշ, արեգնագ քրմուհիներ, թասերով գինի տարէ՛ք Արմինայի արքաներին, թագաւորներին, իշխաններին, թագուհիներին: Եկէ՛ք ձեր թասերը զարկէ՛ք Աստղիկի ու Վահագնի թասին, գինի ըմպէ՛ք նրանց հետ, գինիով օծէ՛ք նրանց ճակատները, գինի շող տուէ՛ք նրանց իրաններին: Հարսանիքի հանդէս է

այսօր, Հայաստանի կարասներում հասունացած գինի բաշխէ՛ք աշխարհական ժողովուրդին, հարսանեկան գինարբուքի հրավառութիւն թող լինի այսօր:

Արմինայի Արամէ արքան, գիրկը կարմիր վարդերի մեծ փունջ պահած թագուհին մօտենում են Աստղիկին ու Վահագնին: Թագուհին վարդերն է ցանում Աստղիկի վրայ, իր արիւնից շողում կարմիր վարդերն են հոսում իրանից, վարդեր է նետում հարսանեւորներին, որոնք այն փնջերով ետ նետում Աստղիկի վրայ, կարծես կարմիր հեղեղ է հոսում նրա վրայից, աստուածների հարսանիքի հանդէս է, տիեզերքի աստղերի կարմիր հրավառութեան տօնահանդէս է: Արամէ արքան կանչում է՝ Աստղիկ հարս, այդ ճշմարիտ է, որ ամէն գարնանը վարդերի թերթիկներ ես շող տալիս Արմինա աշխարհի վրայ, որ հպեն մայրացած պարմանուհիներին, քեզ նման աստղերի կրակ փայլով աղջնակներ լոյս բերեն: Ահա նրանք, պարմանների հետ հարսանեաց հանդէսի պատարագին են եկել, տեսէ՛ք երկնից աստղեր են իջել մեհենան: Արմին-Հայ պարման, դու էլ նայիր, տես՛ նայիր ինչքա՞ն պիտի արբենաս, խենթանաս նրանց աստղագեղ հմայքից, գնա՛ գրկիր մէկն ու մէկին, տար՛ քու երկրի Միհրի տաճար, հարսանեկան հանդէս պատարագի՛ր: Աղջնակներ իրենց գրկերնին, վագում դէպի Աստղիկը, հպում իւրաքանչիւրի երեսին, իր կարմիր գեղեցկութեան լոյսը հոսում նրանց դէմքերին:

Արատտա երկրի Մեծամորի իշխանը, թագուհուն թեւանցուկ արած, երկնի կարմիր աստղերով մագաղաթը վեր պահած գնում Աստղիկի ու Վահագնի առաջ, գրկախառնում նրանց հետ, համբուրում նրանց վսեմ ճակատները: Մագաղաթը թեք պահած դէպի հարսանեւորները, դիմում Վահագնին.

Վահագն, նայիր մագաղաթի «ահագնի Յարդագողի ձանապարհի» աստղերին: Վահագն, հարաւի աւարառու երկրի թագաւորի Արմինայի արտերից յափշտակած արեւալոյս ցորեանի կախուած յարզը երկնային տաճար տանելու ատեն թափուել էր քու երթի կապոյտ ճանապարհին: Միհր աստուածն էր նրանց վրայ լոյս փռել, լուսատուներ դարձած լոյս սփռում Արմինայի աշխարհին: Արմինա երկրի թագաւորները, քրմապետ թագաւորները, աշխարհային ժողովուրդը փառաբանում Միհրին, Վահագնի ճանապարհին աստղեր վառելու, Լեռնաշխարհի վրայ արեւալոյս ցանելու:

Քսանթօթ Բիախանների քրմապետ թագաւորներ համախումբ գնում գրկում Աստղիկին ու Վահագնին, համբուրում Աստղիկի վարդ այտերը, Վահագնի վեհապան ճակատը: Մերադրում են նրա առաջ, գօտկատեղից կախ ընկած վիշապի պիղծ արիւնով

կարմրած սուրը ճակատներին հպում: Կանչում են, որ նրա կուռի ու յաղթանակի ոգու հրայրքով թշնամիների դէմ մղուած բոլոր մարտերը յաղթանակով պահեն: Երդուել են, իրենց Բիախնա աշխարհի ոստանում Աստղիկի պատուին մեհենան պատել, այնտեղ կանգնեցնել իրար թեւանցուկ արած իրենց քանդակը: Հիմա, վարար են մեր Բիախնանների աղբիւրների ջրերը, այդ դու էիր որ տաններկու գագանիկների հետ մարտի ելար ջրերի ակունքները գոցած վիշապի դէմ, սպաննեցիր նրան, նորէն պայթեցին Լեռնաշխարհի աղբիւրների ակները, Նար Մովինարին գրկած վերադարձար երկիր:

Արմին առաջնորդը, կրակ վարդերի փունջը վեր պահած, հրճուած լից կանչերով գնում կանգնում Աստղիկի ու Վահագնի առաջ, փունջը դնում Աստղիկի հեւքոտ լանջին, Վահագնին պինդ գրկում, մի քայլ ետ անում ու այսպէս խօսում.

Արմինների աշխարհի սիրոյ, գեղեցկութեան դիցուհի, պատերազմի ու յաղթանակի աստուած Վահագնի հարս Աստղիկ: Վահագն աստուած երկնի աստղերի լոյսից քաղեց քեզ, աստղերի կարմիր լոյս ժպիտը հոսեց կապոյտ ակներիդ, վաղա-կարմիր դէմքիդ: Աստուածների ճախրանքով Արարատի բարձունք բերեց, ձիւնոտ հանդերձ կապեց մարդացած ծիածան իրանիդ: Լուսնեակի անուշիկ դէմքի սպիտակը հոսեց ճակատիդ, արեգաճեմ լեռան ձիւնոտ լանջերի ծաղիկի բոյրով օծեց: Միհր աստուած արեւաբորբ մարմնիդ ծիածան կապեց:

Վարս Աստղիկ, Վահագնի սրտում սիրոյ կրակ վառեցիր, մարդացած աստուածների լոյսի հրավառութիւն եղեւ: Արմինայի իշխանագուններ, աշխարհական ժողովուրդ, եկել են մարդացած աստուածների հանդէսի պատարագին, նրանց լուսավառ սիրոյ հրավառութիւնը տօնախմբելու՞:

Արմին առաջնորդը, խօսքն ուղղում է աշխարհական ժողովուրդին.

Վարմինա երկրի այրեր, մի ուշանաք պարման-պարմանուհիների աշխարհական հարսանեաց հանդէսներ տօնախմբել, յախուռն բազմացէ՛ք: Մեր անցած ճանապարհին Արմինա երկրում շէները բազմախումբ չէին: Աշխարհական մարդիկ են բարիք արարում, նրանց որդիներն են մարմնչում երկրի պաշտպանական կուռներում: Արմինների աստուածները կուռի, հողի մայրութեան ոգի են հոսել մեր սրտերին, սակայն բազմախումբ թշնամին հնարաւոր է սասանել այն: Այդպէս է, որ իմ առաջնորդած մարդիկ տանուլ են տուել բազում մարտեր, պոկել են իրենց շէներից, սակայն իրենց հողիների տաճարներում շարունակել են պատարագել իրենց Նահապետներին, հայրենի հողին, աստուածներին, նրանց պատուները, կրակի ու լոյսի պաշտամունքը: Ապացոյց, ահա իրենց անցած ճանապարհներին, ցեղին սրտի ոգու սերմերը ցանելուց յետոյ, բազում կորուստներով հասել երկիր: Հայոց աստուածների մեհենաններում նորէն պիտի պատարագեն աստուածներին, պիտի վերադառնան երկիր, իրենց արարած արեւորդիներին կուռի, յաղթանակի ոգու հուր շողեն:

Արմին առաջնորդը կանչում է իր հետ եկած մարդկանց՝ -Իմ այս ցուպը, ձեր բոլորի ցուպերը նետեցէ՛ք մեհենանի հրապարակ, որպէս երկիր վերադարձի յաղթանակի նշան, այրէ՛ք նրանց, կրակի բոցերում թող վառուեն մեր

բոլորի հողիներում ծուարած ստրկութեան հնազանդութեան բարդոյթը:

Վահագնի քրմապետը, մեհենանի մուտքի առաջ դուրս գալով հրաւիրում է աշխարհական ժողովուրդին գալ Աստղիկի ու Վահագնի հարսանեաց հանդէսին իրենց նոր բերքի երախայրիքը նուիրաբերելու: Իրենց լեռների լանջերի կուտակ ձիւնից պայթած ձնծաղիկների խոշոր փունջեր, ուսերնին գինու սափորներ, ձեռքերնին ծիածան գոյներով մրգերով ու արեւահաս խաղողով լիքը կթոցներ, ոսկէ հատիկներով ցորեանի հասկերի խուրձեր, պախուրձներէն պահած արջառներով շարան-շարան մտնում մեհենան: Մերադրում Աստղիկի ու Վահագնի առաջ, ցորեանի ոսկի հասկեր փռում նրանց առաջ, նրանց սենեակ տանող ճեմուղիներին, նրանց իրաններին, նրանց բազաններին, թասերով գինի շող տալիս: Կթոցներով արեւալոյս մրգեր ու խաղող փռում նրանց առաջ, ցորեանի ցողուններից հիւսած մատուցարաններով ծիածանի հագար երանգներով մրգեր ու խաղող լցնում նրանց սենեակ: Խնդու-թիւն էր, առատութիւն էր մեհենանում, հարսանեկան հանդէսի հրճուանք էր: Արջառներ են գոհում նրանց ոտքերի առաջ, խնդրում նրանց արիւնի առուակներում մխրձել իրենց ոտները, արիւնոտ մատներով Միհրի նշան անում նրանց ճակատներին: օ՞հ Արմին արեւորդի, ինչո՞ւ ուրիշների ճամբաներին մոլորուած բոլոր արորդիներին շառաջնորդեցիր Աշտիշատ, որ տեսնէին իրենց նախնիների աստուածների հարսանեաց հանդէսի պատարագի խնդութիւնը: Սակայն, իրենց աստուածների, իրենց արեգաճեմ լեռան յուշը չի մշուշել իրենց հողիներում: Որպէս ցեղի ոգու ծին, այն տարել իրենց հետ, նոր հանգրուաններում առատախուռն ու հրճուալի նման հարսանեաց հանդէսներ են տօնախմբել: Նրանց ցեղին սրտի ոգին չի մեռնի, քանի չի մարել իրենց հողիներում նախնիների պաշտամունքը, վկայ այս գիրքը, վկայ Արմին իմաստունների գրերը:

Մեհենանի սրահում Վահագն ու Աստղիկն են կանգնել ճակատները իրար հպած, Միհրն է կրակով լիքը սկիհը նրանց վրայ պահում: Արա աստուածը՝ Անահիտի, Նանէի, Տիրի, Վանատուրի, Նար Մովինարի հետ մօտենում նրանց: Կրակի, լոյսի, բնութեան յարութեան, տիեզարական իմաստութեան, վարար ջրի մաղթանքների ծէսերի արարողութիւնները կատարում, ափերով կրակի լոյս ցանում նրանց վրայ, հաւատարմութեան ուխտի նարօտ լինի այն , ամէն ինչից առաւել իրար սիրեն . . . :

Մեհենանի ու շինականների ծիրանի փողերն են հնչում: Վահագնի քրմապետը արքաներին, թագուհիներին, իշխաններին կանչում շուրջ պարի: Իրենց աշխարհի յաղթ պարերն են, մի պահ թագուհիները շարքերից դուրս գալիս, ալիքում է նագանքը արմինների տիկնանց, էլեւէջում են ցորեանի արտերին իջած գեփիւռի քնքանքի նման, խայտում ոսկի հասկերի լոյսերի հանգոյն, հանդերձներին Միհրի ծիածանն է հագար գոյներով շողում: Եւ արքաներն ու իշխաններն են երկու շարքերով կանգնել դէմ դիմաց, մօտեցել իրար, զարկել իրար, թագուհիներն էին անցել նրանց շարքերի միջով, դարձեալ



### ԿԱՆԱՅՔ

Հին ժամանակներէն կանայք ապրած են աշխոյժ հասարակութենէն անջատ՝ արհամարհուած ըլլալով գրեթէ բոլոր բնագաւառներու մէջ: Իսկ սոցիալական հետ հաւասար քայլ նետելու մասին խօսիլը աւելորդ էր:

Միջնադարուն ուշադրութեան կ'արժանանային միայն ազնուականներու կանայք եւ աղջիկները: Ամուսնացած կանայք պէտք է հնազանդ ըլլային իրենց ամուսիններուն նոյնիսկ, եթէ վերջինները բունութեան կը դիմէին, իսկ ամուսնալուծութիւններու մասին խօսիլը յանցագործութիւն էր:

Ըստ մասնագէտներու՝ միջնադարու կանայք կը զբաղէին ծննդաբերութեան, հարսանիքի եւ մահուան իրադարձութիւններու կազմակերպմամբ, ինչպէս նաեւ աւանդական բժշկութեամբ, կենցաղային հարցերով եւ այլն: Իսկ, ի տարբերութիւն գիւղի, քաղաքի կանայք կը կրթուէին եւ կը զարգանային, սակայն դարձեալ իրաւապէս հաւասար չէին հակառակ սեռի ներկայացուցիչներուն հետ:

Թէպէտ այսօր մեծ աշխատանքներ կը տարուին կանանց իրաւունքներուն ոչ միայն «տէ իւրէ», այլեւ «տէ ֆաթթօ» կարգաւորման ուղղութեամբ, կանայք ունին հաւասարութեան իրենց բանաձեւը՝ պարզապէս կը փափաքին ըլլալ սիրուած եւ յարգուած:

### ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Չամիչի պարբերաբար օգտագործումը կը հանգստացնէ Չղային համակարգը:

Չամիչը ոչ միայն հաճելի է քիմքի համար, այլեւ՝ օժտուած է բազմաթիւ օգտակար յատկութիւններով: Չամիչի պարբերաբար օգտագործումը կ'ամրապնդէ Չղային համակարգը:

Բժիշկները խորհուրդ կու տան չամիչ ուտել անեմիայի եւ ընդհանուր թուլութեան ժամանակ, տենդի եւ աղեստամոքսային խանգարումներու ժամանակ, ինչպէս նաեւ սրտի եւ երիկամներու հիւանդութիւններու ժամանակ:

Օգտակար է թոքերը, սիրտը, Չղային համակարգը ամրապնդելու համար, ունի թուլացնող յատկութիւն, որուն հետեւանքով կը ճնշէ ցասումը եւ կը հանդարտեցնէ Չիղերը: Չամիչի օգնութեամբ կարելի է բուժել նոյնիսկ ակուսներու կիրն ու լինտերու հիւանդութիւնները:

Չամիչը հարուստ է օգտակար հանքային աղերով, թթուներով եւ կենսանիւթերով:

Չամիչին մէջ ութ անգամ աւել շաքար կայ, քան՝ թարմ խաղողին: Երբ պաղարուծիւն եւ չոր հազ ունիք 100 կրամ չամիչի վրայ լեցուցէք եռացած Չուր եւ ձգեցէք 10 վայրկեան, այնուհետեւ ձգեցէք խառնուրդը, աւելցուցէք մէկ դգալ սոխի հիւթ եւ խմեցէք կէս բաժակ՝ օրական երեք անգամ:

Ուժեղ հազի եւ պրոնչիթի ժամանակ 30 կրամ չամիչը 45 վայրկեան ձգեցէք եռացած եւ պաղած Չուրի մէջ ու քնանալէ առաջ կերէք տաք կաթի հետ:

Չամիչը օգտակար է նաեւ անքնութեան պարագային: Խորհուրդ կը տրուի քնանալէն առաջ ուտել 50 կրամ չամիչ:

### ԲԱՆԱԿԱՆ ՅԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ԲԶԻԶԱՅԻՆ ՅԵՌԱԶԱՅՆՆԵՐԸ ԵՒ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ

Computers in Human Behavior ամսաթերթը հրատարակած է յօդուած մը բժիշկային հեռաձայններու չափազանց օգտագործման հետեւանքներուն գծով: Ըստ Օհայոյի գիտնականներուն, բժիշկային հեռաձայնները, որոնք դարձած են առօրեայ կեանքի անբաժանելի մասնիկներէն մէկը, կրնան վատ հետեւանքներ ունենալ ուսումնական եւ հոգեբանական ծիրերուն մէջ:

Այս ուսումնասիրութիւնը կատարուած է Քէնդ Սթէյթ համալսարանի հովանաւորութեամբ, մասնակցութեամբ աւելի քան հինգ հարիւր համալսարանական ուսանողներու: Արդիւնքներուն շնորհիւ, հետազոտողները յաջողած են յայտնաբերել յարաբերակցական կապ մը բժիշկային հեռաձայններու օգտագործման եւ ձախողութեան միջեւ: Բժիշկային հեռաձայններու չափազանցուած օգտագործումը կրնայ աղբիւր դառնալ անձկութեան (anxiety), տիրութեան եւ ուսումնական ձախողութեան:

Միւս կողմէն կարեւոր է նշել, որ բժիշկային հեռաձայնները մեծապէս կը նպաստեն հաղորդակցութեան յատկապէս ուսանողներու եւ իրենց ընտանիքի անդամներուն միջեւ: Ուսումնասիրութեան հեղինակները կը շեշտեն թէ այս ուսումնասիրութիւնը ոչ մէկ ձեւով չստորադասեր բժիշկային հեռաձայններու եւ արհեստագիտութեան դրական ազդեցութիւնները երիտասարդներուն կեանքին մէջ:

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
SERVING BATON ROUGE SINCE 1979

**«ՔԱԶ ՆԱԶԱՐ»**  
**ՌԻՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00–ից 12:30  
Կլէմտայի 380-րդ կայանից

### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԿԱՏԱՐԵԱԼ ԴԻՄԱՅԱՐԴԱՐՄԱՆ ՅԱՄԱՐ

Իւրաքանչիւր կին գիտէ՝ որ օրուան ընթացքին դէմքը թարմ պահելու համար, դիմաշարդարումը պէտք է պարբերաբար թարմացուի: Աւելորդ չէ ծանօթանալ կանացի փոքրիկ խորամանկութիւններու, որոնք պիտի օգնեն թարմացնելու դիմաշարդարումը եւ դէմքը գեղեցիկ դարձնելու:

**ա. Փափուկ թարթիչներ**  
Եթէ ձեռքի տակ թարթիչներու ներկ չկայ, որ թարթիչներուն ծաւալ հաղորդէ, օգտուեցէք դիմափոշին: Անիկա ցանցեցէք թարթիչներուն վրայ, ապա պատեցէք մինչ այդ քսած ներկով: Այդպէս ձեր թարթիչները կը ստանան աւելի փափուկ եւ խիտ տեսք:

**բ. Գեղեցիկ մաշկ**  
Եթէ դիմաշարդարումը ըրած էք առաւօտեան, իսկ երեկոյեան պէտք է կարեւոր ձեռնարկի երթաք, չմոռնաք կարգի բերել դիմաշարդարանքը: Ձեռքի տակ չունիք խոնաւ թաշկինակ: Խնդիր չէ: Վերցուցէք սովորական թուղթէ թաշկինակ, գայն թրջեցէք եւ անով խոնաւցուցէք դէմքը:

Այդպիսով դուք պիտի ազատիք օրուան ընթացքին կուտակ-

ուած փոշիէն: Այնուհետեւ կարելի է քիչ մը դիմափոշի քսել քիթին եւ ճակատին վրայ:

**գ. Տօնական քսուկ**  
Տօնական քսուկի (cream) օգտագործման կանոնները պէտք է իմանայ իւրաքանչիւր կին: Չայն կը քսեն բացառապէս մաքրուած մաշկի վրայ: Եթէ կը փափաքիք, որ քսուկը պահպանուի երկար, ուստի անոր տակէն պէտք է հիմք օգտագործէք: Քսեցէք տօնական քսուկը մաքուր մաշկի վրայ, ապա սառույցի կտորով անցէք դէմքին վրայէն: Մի մտահոգուիք, որ քսուկը կրնայ լրողուիլ. սառույցի իւրաքանչիւր կտոր պէտք է օգտագործել մինչեւ այն պահը, քանի դեռ անիկա չէ սկսած հալիլ:

**դ. Աշխուժացուցիչ մաշկը**  
Օրուան ընթացքին ձեր մաշկը կը յոգնի: Եթէ դիմաշարդարումը ընելէ առաջ աչքերուն տակ կը նկատէք սեւ շրջանակներ կամ յոգնածութեան հետքեր, ուստի կիտրոնով պատրաստեցէք լուացող հեղուկ եւ անով տրորեցէք դէմքը պտտուական շարժումներով: Քանի մը կաթիլ լիմոնի հիւթը խառնեցէք Չուրին ու ստացուած հեղուկը օգտագործեցէք դիմաշարդարումը սկսելէ առաջ:

### DEMENTIA-Ի ԴԵՍ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Ռոյթըրգ լրատուական գործակալութիւնը իր համացանցային կայքէջին միջոցով յայտարարած է թէ G8-ի երկիրները իրենց վերջին գիտաժողովի ընթացքին մշակած են ընդարձակ ծրագրի մը՝ պայքարելու համար Dementia-ի դէմ: Այս ծրագիրը թոյլ կու տայ մինչեւ 2025 բուժում գտնել Dementia անհանգստութեան:

Այս անհանգստութեան գծով ՄԱԿի Աշխարհի Առողջութեան կազմակերպութեան (World Health Organization) նախագահը յայտարարած է թէ ներկայիս անոնք ոչ մէկ գիտական միջոց ունին դէմ դնելու Dementia-ի: Լոնտոնի մէջ կատարուած գիտաժողովի ընթացքին Բրիտանիոյ վարչապետը՝ Տէյլիտ Գամբրոն կ'ըսէ թէ կարեւոր է իմանալ եւ տարածել որ Dementia-ն ծերութեան բնական երեւոյթ չէ, այլ՝ մտային լուրջ անհանգստութիւն է,

որ ի վերջոյ պատճառ կը դառնայ մահուան: Առողջութեան նախարարը՝ ձէրէմի Հանտ դիտել կու տայ թէ 2005 թուականէն ի վեր G8-ը մեծ դեր ունեցած է AIDS-ի դէմ պայքարելու աշխատանքին մէջ:

Dementia-ի ամէնէն սովորական հետեւանքն է Alzheimer's-ը, որմէ տառապող անձերուն թիւը ներկայիս հասած է 44 միլիոնի, իսկ 2050 թուականին այս թիւը պիտի բարձրանայ հասնելով՝ 135 միլիոնի: Ներկայ դեղամիջոցները կրնան մեղմացնել կամ անհետացնել անհանգստութեան ախտանշանները, սակայն այս մէկը ոչ մէկ նպաստ ունի անհանգստութեան բուժման համար:

Մասնագէտները կը շեշտեն որ կարելի է որոշ չափով կանխարգիլել Dementia-ի վտանգը մարզանքի, առողջապահական անդամներին եւ ծխախոտէն խուսափելու միջոցներով:

### ԿԱՐԾԻՔՆԵՐ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Կեանքի մէջ երջանկութիւնը մէկ անգամ կը թակէ իւրաքանչիւրի դուռը, բայց յաճախ այդ «իւրաքանչիւրը» նստած է հարեւան պանդոկին մէջ եւ չի լսեր թակոցի ձայնը:  
(Մարք Թուէյն)

Կեանքի ամենամեծ երջանկութիւնը՝ վստահութիւնն է այն բանի մէջ, որ մեզ կը սիրեն. կը սիրեն անոր համար, որ մենք այնպիսին ենք, ինչպիսին կանք, կամ ալ հակառակ անոր, որ մենք այնպիսին ենք, ինչպիսին կանք:  
(Վիքթոր Հիլկո)

Երբ մենք երջանիկ ենք, մենք միշտ բարի ենք, բայց երբ մենք բարի ենք, միշտ չէ որ երջանիկ ենք:  
(Օսքար Ուայլս)

Մենք իրաւունք չունինք վայելելու երջանկութիւնը, եթէ ուրիշին երջանկութիւն չենք պատճառած, ինչպէս իրաւունք չունինք վայելելու հարստութիւնը, եթէ անոր համար չենք աշխատած:  
(Պեռնարտ Շօ)

Երջանկութիւնը լաւ առողջութիւնը եւ վատ չիղողութիւնն է:  
(Ինկմար Պերկման)

Միայն խանդավառ հոգիները կրնան պայքարիլ ու յաղթել:  
Բոլոր մեծ ջանքերը, բոլոր վեհ գործերը կը պատկանին անոնց: Սառ դատողութիւնը գեղեցիկ բան չէ կատարած:  
(անանուան հեղինակ)

### ՀԱՅՈՒ ԱՐԳԱՆԴԸ ՆԵԼՍԸՆ ՄԱՆՏԵԼԱ ՄԸ ՊԻՏԻ ԾՆԻ՞...

#### Շարունակում է 1-էն

Մանտելյան նաև, իր ժողովուրդին՝ մարդկային, ընկերային և քաղաքական մակարդակի արժանապատի կեանքի ակտիվացումը, համար, նախապայման կը նկատվի Հարաւային Ափրիկէն օժտել ժողովրդավարական և արդարութեան վրայ հիմնուած վարչակարգով: Այդ վարչակարգն էր, որ պիտի գար նուիրագործելու իր ժողովուրդի ազգային միասնութիւնը, և պատրաստելու երկրի նոր կանոնադրութիւնը, որով մի անգամ ընդմիջտ պիտի վերացուէր ցեղային խտրականութիւնը: Երկրէն ներս կերտելու խաղաղութիւնը, ունենալու ներդրումութիւնը, կարգ ու արդարադատութիւնը, օրէնքի առջեւ հաւասարութիւնը, բարեկամութիւնը և մարդասիրութիւնը:

Վերոյիշեալ առաջադրանքները կենսագործելու համար, 1994-ին Մանտելյան իր թեկնածութիւնը կը դնէ երկրի նախագահական ընտրութիւններուն: Ափրիկեան Ազգային համաժողովը ուժեղ յարթանակ կը տանի և Մանտելյան կը դառնայ Հարաւային Ափրիկէի Հանրապետութեան առաջին սեւամորթ նախագահը: Արդարեւ, Մանտելյան ժողովրդավարական բազմազգ ընտրութեամբ՝ յաղթանակած կը դառնան ժողովրդավարութիւնը, ազգային միասնութիւնը, ցեղերու միջեւ անխտրականութիւնը, որոնք արտայայտութիւն կը գտնեն շուտով կազմուած կառավարութեան նշանակումով, ուր իրենց մասնակցութիւնը կը բերէին երկրի համարեալ՝ բոլոր կուսակցութիւններու ներկայացուցիչները: Յաջորդ նախագահական ընտրութիւններուն,

րուն, Մանտելյան կը մերժէ դնել իր թեկնածութիւնը նախընտրելով նուիրուիլ «Նելսըն Մանտելյան Հիմնարկութեան» բարեսիրական աշխատանքներուն:

Նելսըն Մանտելյան իր երկրէն ներս և աշխարհով մէկ յարգուեցաւ, մեծարուեցաւ, արժանացաւ բազմատասնեակ մրցանակներու, յորջորջուեցաւ «ժողովուրդին Հայր» նաև՝ «Աշխարհիկ Սուրբ»՝ որովհետեւ ան մնաց իր ժողովուրդի կողմին, հայրենիքի և մարդու իրաւունքներու պաշտպանութեան դիրքերու վրայ, գործեց ժողովրդավարութեան և արդարութեան հաստատման տեսիլներով, պայքարեցաւ իր երկրէն ներս տիրող աղիւստութեան դէմ, նշանակելու նորուներով իր ժողովուրդին ֆիզիկական ապահովութիւն տալու, բարեկեցիկ կեանքի պայմաններ ստեղծելու, օրէնքի առջեւ հաւասարութիւնը պահելու անխտրական հոգատարութիւնը:

Իր նախագահութեան պաշտօնի աւարտէն տար տարիներ ետ, նշմարութեան յետամուտ, բարոյական արժանիքներու հեղինակութիւն Նելսըն Մանտելյանի նախագահական ժամանակաշրջանը կը նմանցուի յոյսի, ցեղերու միջեւ ներդաշնակցութեան, անխտրական և ժողովրդավարական կարգավիճակի ոսկեղարի:

Նելսըն Մանտելյանի ազգային, ընկերային, հայրենասիրական, քաղաքական և համամարդկային շնորհները առողջ իրագործումներուն ի տես՝ բարի նախանձը կը ննչէ ամէն մի հայու ցաւոտ սրտին, որ լուռ արտայայտութիւն կը գգնուի հետեւեալ հարցականով. «Հայր արգանդը Նելսըն Մանտելյան մը պիտի ծնիր...»:

### ՆԵԼՍԸՆ ՄԱՆՏԵԼԱՅԻ ՄԱՅՈՎ

#### Շարունակում է 6-էն

կան շեշտով մը, ըսաւ ապահովութեան պաշտօնեային.

«Երիտասարդ, կը տեսնես որ կը գրուցնէ Պրն. Կիլգելեանին հետ. երբ մեր գրոյցը աւարտի՝ կու գամ դուրս:

Երբ բաժնուեցայ Մանտելյանին, հոգեպէս հարստացած զգացի ինքզինքս:

Մարդկային վեհագոյն սկզբունքներու տէր այս մարդը, որ գիտցաւ ատելութիւնը կերպարա-

նափոխել սիրոյ, տապալել վրիժառութեան չաստծուն արձանն ու անոր տեղ կառուցել իրարհասկացողութեան, փոխադարձ յարգանքի ու համերշխութեան տաճարը, արժանի է համայն մարդկութեան յարգանքին:

Արդարեւ, ամբողջ աշխարհն այսօր երկիւղածութեամբ ծունկի եկած է անոր յիշատակին առջեւ: Նելսըն Մանտելյան մեռած է, բայց չէ մահացած:

Մեծութիւնները կը մեռնին, բայց չեն մահանար:

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը խոր ցաւով իմացաւ Ս.Դ.Հ.Կ.ի Հայաստանի Վ. Մարմնի անդամներէն ընկ. Արտաշէս Բարսեղեանի դառնաղէտ վաղահաս մահը, որ պատահած է 9 Դեկ. 2013-ին Երեւան: Ան աւարտած Կիւմրիի Նոլիտեխնիկական ինստիտուտը, ապա իր բարձրագոյն ուսումը շարունակած է Թիւրմենի պետական իրաւաբանական համալսարանականի մէջ: Ընկ. Բարսեղեան գործնապէս մասնակցած է Արցախեան ազատամարտին և միմնադիրն է «Յատուկ Նշանակութեան» շոկատին: Այս տխուր առիթով, «Մասիս» իր ցաւակցութիւնները կը յայտնէ Հայաստանի Վ. Մարմնին և ողբացեալ ընկերոջ ընտանեկան բոլոր պարագաներուն:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
 Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել «Կայծ» Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
**G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104**

### ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՍԸ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ՏՕՆԱԽՄԲԵՑ

#### Շարունակում է 7-էն

նոր յաջողութիւններ տանող ճանապարհով:

Մեր խորին երախտագիտութիւնը անխտիր բոլորին, Թեմի հոգեւորականաց, Թեմական Խորհուրդին՝ ատենապետութեամբ Դատաւոր Էտրիւն Գրիգորեանի, Առաջնորդարանի պաշտօնէութեան՝ գլխաւորութեամբ Տիար Յարութ Մարգարեանի, Մայր Տաճարի անձնակազմին՝ գլխաւորութեամբ Արժ. Տ. Խաթալ Բհնյ. Շահպաղեանի, Առաջնորդարանի ենթակառուցներուն, և այսօր ի մասնաւորի Սուրբ Ծննդեան Խրախճանքի Յանձնաժողովին՝ գլխաւորութեամբ Տիար Ռաֆֆի Քենտրիճեանի, որոնք բացառիկ կերպով կը կազմակերպեն այս երեկոները տարուէ տարի:

Այս երեկոյ մեր մասնաւոր գնահատութիւնը կը յղենք օրուան պատուի արժանացող ազգայիններուն: Դուք, սիրելիներ, Ձեր վաստակով, ծառայութեամբ, մասնագիտութեամբ փառքն ու պատիւն էք հայ համայնքին: Համայնքին նկարագիր կը պարզեւէք Ձեր բարի ներդրումներով և փաստօրէն Ձեր կեանքով կը դառնաք Աստուծոյ ձեռքերը: Երանելի էք դուք բոլորը և Ձեզմէ ամէն մէկը օրհնութեան ճանապարհ է մեր կեանքին մէջ: Այս երեկոն կը ձօնենք Ձեզի որպէս երախտագիտութիւն ի դիմաց Ձեր բարի ծառայութեանց, որովհետեւ Դուք Աստուծոյ տուած կեանքը կ'իմաստաւորէք հաւատքի կեանքով, նախանձախնդիր ծառայութեամբ: Յանուն բոլորի կը շնորհակարտենք Ձեզ և թող Աստուած օրհնէ Ձեզ և Ձեր բոլորի ընտանեկան պարագայից պարգեւէ կենաց քաջաւոյժ երկար տարիներ: Յնձալի այս տօնախմբութեան ընթացքին տեղի ունեցան բանաձե-

ւերու և սրտաբուխ շնորհակարտական արտայայտութիւններ Առաջնորդ Սրբազան Հօր պաշտօնավարութեան 10 ամեակի բարեբաաստիկ առթիւով, որ այս ժամանակաշրջանին իր ծառայութեան ոգին դրոշմած է Հայ Համայնքի սրտին մէջ: Պաշտօնական անձնակառուցութիւններուն մաս կը կազմէին Գոնկրէմէն Ատամ Շիֆ, Պատուարժան Մայքըլ Անթոնովիչ՝ Լոս Անճելըս Գաւառի տարանի Խորհուրդի Անդամ և Գալիֆորնիա Նահանգի Ասէմպլի-մէն Գաթէօ Աչաճեան: Ներկայ գտնուող այլ յարգարժան հիւրերն էին Տիար Անդրանիկ Պաղտասարեան՝ Նախագահ, «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»-ի, Պատուարժան Դատաւոր Էտրիւն Գրիգորեան՝ Ատենապետ Թեմական Խորհուրդի, ինչպէս նաև ներկայացուցիչները մասնագիտական կազմակերպութիւններու՝ ներառեալ Ամերիկահայ Իրաւաբաններու Միութիւն, Հայ Ամերիկեան Բժշկական Ընկերակցութիւն և Հայ Ոսկրածուծի Նուիրատուներ Ապահովող Յանձնախումբ:

Սուրբ Ծննդեան Խրախճանքի Յանձնախումբը Առաջնորդ Սրբազան Հօր ներկայացուց զեղեցկօրէն զարդարուած կարկանդակ և խորհրդանշանական նուէր մը բարեբաստիկ և յիշատակելի այս առիթով: Ապա սրահէն ներս ցնծութիւնն ու հաճոյքը շարունակուեցաւ, երբ ներկաները պարեցին ԱՐԵՒ-ՄԵՐԳԶԻՒԹԵՐԻ ԷՂՆ Ժ. և DJ twins-ի երաժշտութեան և երգերու ներքոյ: Սոյն ձեռնարկը զեղեցիկ առիթ մը ստեղծեց, որ հանդիսականները խառնուին պատուի արժանացողներուն և անոնց ընտանիքներուն հետ և իրենց անձնական շնորհակարտութիւններն ու լաւագոյն մաղթանքները փոխանցելու անոնց:

### ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ

#### Շարունակում է 8-էն

նելու անոնց: Ներկաները միշտ ալ իր գեկուցումն ու բոցաշունչ ելոյթները կը դիմաւորեն լիաբուռն ծափահարութիւններով և կը շարունակեն տալ իրենց հաւատարմացողները շարունակելու իրենց գորակցութիւնն ու նեցուկը: Հաւաքուած էին շուրջ ութսուն նուիրատուներ, որոնցմէ բացի ոմանք ճաշկերոյթէն առաջ, ուրիշներ ալ անկէ ետք, ներկայացան Գուրգէնին և իրենց քաջալերական արտայայտութիւններուն աւուրթեր նորոգեցին իրենց ուխտը:

Անցնող տարեշրջանի գործունէութեան առնչութեամբ Պրն. Մելիքեան լուսարձակ պատկերներու ցուցադրութեամբ ներկաները փոխադրեց Քաշաթաղ և ցոյց տուաւ նոր ծառայողներու դրուագներ, որոնց մէջ իրենց մասնակցութեամբ կը գերազանցէին երկուսը համալսարանականները: Ի դէպ՝ Հիմնադրամի ջանքերով ցարդ

տնկուած են աւելի քան 230.000 ծառեր: Հիմնադրամը օգնութեան հասած է շուրջ 250 կարիքաւոր ընտանիքներու՝ անոնց տրամադրելով սերմնացու և կաթնաստանաստաններ: Հիմնադրամը հովանաւորած է նաև զանազան հրատարակութիւններ և օգնութեան ձեռք մեկնած կարիքաւոր ուսանողներու կրթաթոշակներու ձեռք բերման: Յաջողութիւն և արեւշատութիւն կը մաղթենք առիւծասիրտ ու միշտ երիտասարդական աւիւնով լեցուած Գուրգէնին: Հայրենիքը կը կերտուի ու շէննայ նաև Գուրգէններու նման անձնագորհ հայերու անսակարկ նուիրաբերումներուն շնորհիւ: Շնորհակալութիւն նաև նուիրատուներուն, որոնց անվերապահ աջակցութեան շնորհիւ աւելի՛ կ'ամրանայ հայրենի շէնքը:

Դոկտ. Մինաս Գոճայեան  
 Բանասէր, դասախօս, երկարամեայ մանկավարժ

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս»**  
**Շարաքաթերթին**  
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
 Massis2@earthlink.net

### ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆ

«ՄԱՍԻՍ» Շաբաթաթերթի 33րդ Տարեդարձի առիթով կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար կարգմակերպիչ յանձնախումբը շնորհակալութիւն կը յայտնէ:

Տէր եւ Տիկ. Թադէոս Քէօրօղլեան	\$10,000
Տիրար Անդրանիկ Պաղտասարեան	\$5,000
Հ.Մ.Մ.ի Տիկնանց Միութիւն	\$1,500
Տէր եւ Տիկ. Յարութ Օհանեան	\$1,000
Արժ. Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Հալլաճեան	\$1,000
Տէր եւ Տիկ. Վրէժ եւ Արմիկ Թոմպուլեան (Vrej Pastry)	\$1000
Տէր եւ Տիկ. Հէրի եւ Արշո Տիրամերեան	\$500
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան	\$500
Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սեւան Գալէնտէրեան	\$500
Տիկին Ատրիան Սաղրեան Argent Bank	\$500
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյեմեան	\$500
Սահակեանցի մը	\$500
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տէփոյեան	\$500
Տէր եւ Տիկ. Շահէ եւ Սալբի Կանիմեան	\$500
Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան	\$500
Տէր եւ Տիկ.Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան	\$500
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեան	\$500
Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան	\$500
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեան	%500
Տէր եւ Տիկ. Աւօ Մազմանեան	\$500
Տէր եւ Տիկ. Կէրի եւ Սուզաննա Սինանեան	\$500
Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուս Գրիգորեան	\$500
Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Արմինէ Լաջինեան	\$500
Տէր եւ Տիկ. Գէորգ Թաւուքճեան	\$300
Տէր եւ Տիկ. Դանիէլ Իմաստունեան	\$250
Տէր եւ Տիկ. Զոհրապ Չոլաքեան	\$250
Տէր եւ Տիկ. Գրիգոր Չոլաքեան	\$250
Տէր եւ Տիկ. Սազօ եւ Լուսինէ Թոփալեան (Yerevan Printing)	\$200
Տէր եւ Տիկ. Հէրի եւ Զապէլ Պատաշեան	\$200
Տէր եւ Տիկ.Սարգիս եւ Նորա Գալթաքճեան	\$200
Տէր եւ Տիկ. Բիւզանդ եւ Անահիտ Մէլմարեան	\$200
Տէր եւ Տիկ. Յակոբ Տաքէսեան	\$200
Տէր եւ Տիկ. ձորճ Գուգուեան	\$200
Տէր եւ Տիկ. Սարգիս Վահագն	\$150
Տէր եւ Տիկ. Յակոբ Ատալեան	\$100
Տիկին Հովհիսիմէ Մարգարեան	\$100
Տէր եւ Տիկ. Պօղոս Մութաֆեան	\$100
Տէր եւ Տիկ. Սիմոն Սիմիթեան	\$100
Տիրար Յովհաննէս Պալաչեան	\$100
Տէր եւ Տիկ. Գուրգէն եւ Սեդա Մաթոսեան	\$100
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Ատրինէ Թորոյեան	\$100

### ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ ԿԻԼԻԿԵԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՃԱՇԻ ՁԵՌՆԱՐԿԵՆ (12-08-2013)

Գրիգոր Սարգիսեան	\$500
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյեմեան	\$200
Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթրֆեան	\$150
Յովիկ Քիլիճեան	\$100
Տէր եւ Տիկ. Մարգիս եւ Աստղիկ Խաչատուրեան	\$100
Վարդուկ Յարութիւնեան	\$100
Ալիս Յարութիւնեան	\$100
Ազնիւ Թարխանեան	\$100
Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անուշ Մարտիրոսեան	\$100
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Ալիս Քրումեան	\$100
Տէր եւ Տիկ. Սէմ Սասունեան	\$50
Մի ոմն	\$20

### ԱՍՏԴԻԿԻ ՈՒ ՎԱՅԱԳՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Շաբաթաթերթի 16-էն

իրար մօտեցել, զարկել իրար, նրանց ամբողջ գարկերի ձայները հասնում Սասունի Մհերի Արթմէ-Շուպրիա երկիր: Նրանց պարի գարկերի դուփիւնները, ուրախ կանչերի հռնդիւններից դողում է մեհեանը, դողում էին թագուհիների սրտերը: Հապա մեհեանը բոլորած աշխարհական ժողովուրդի շուրջ պարերը, պարմանուհիների նագելի մենապարերը, Արմին-հայեր ինչո՞ւ աչտեղ չէիք, ինչո՞ւ չէք գնում Գառնիի տաճար տօնախմբելու Անահիտի, Վահագնի, ձեր նախնիների արեգալոյս աստուածների ծնունդին, վախենում էք խնթա՞նք: Մեհեանի որմերին սուռեր են գարկել, կարմիր էր հագել մեհեանը, կարծես աստղեր էին այն իրենց լոյսով ցօղել: Հար-

սանիք էր, արեցել էին գինուց, շուրջ պարերի շարքերում պարմանուհիների ակներից հեղեղուած կրակ լոյսից, նրանց դէմքերին իջած արեւի շողերից:

Կարգ էր, որ հարս ու փեսայ իրենց հարսանեկան հանդէսին պար գային: Քուրմերը ծիրանափողերով հարսանեկան պարեղանակների նուագում, քրմուհիները Ապոլլոնի տաւիղներով, գուսանները փանտիրներով անուշ տաղերն են հնչում: Վահագնը Աստղիկին թեւանցուկ արած գալիս առաջ: Վիշապի արիւնով կարմրած սուրը վեր պահած մենապար է բռնում, ոտքերի դուփիւնից կրակ ժայթքում, սուսերի թափահարումից լոյս վառոււմ, իրանի շարժումներից հովեր իջնում: Աստղիկն է հագար նագանքով նրա շուրջը ելեւէջում, կարծես ալեակ-

### ԶԿԱՅԱՑԱԾ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ ԼԵՌ ԿԱՄԱՐԻ ՅԵՏ

Շաբաթաթերթի 13-էն

ներ: Ապրել ես նոյնիսկ թուրքական իշխանութեան ներքո: Մի՞թէ բոլշևիկները կառավարութիւնը այդքան անընդունելի էր քեզ:

Լ.Կ. - Իմ կեանքի ընթացքում տեսել եմ հինգ վարչակարգեր. սուրբանական՝ թուրքիայում, ցարական՝ Ռուսաստանում, երիտթուրքական՝ թուրքիայում, դաշնակցական՝ Հայաստանում եւ խորհրդային՝ Հայաստանում: Յայտնի է, որ համաշխարհային քարտէսի վրայ թուրքիան ամենակեղտոտ կառավարութիւնն է, բայց նոյնիսկ թուրքիայում իմ լեզուն ոչ ոք չէր կաշկանդել: Այդ պատճառով էլ ես 1931թ-ին, գամանս ժամանակ, 300 հոգիանոց դաշինքում յայտարարեցի. «Թուրք կառավարութիւնը լաւ է ձեր կառավարութիւնից»:

Վ.Թ.- Ին էլ թուրքը, հա՞, դէ էլ ինչ ես բողոքում, որ բանտարկել են, յետոյ էլ 20 տարով աքսորել:

Լ.Կ. - Թէկուզ ցմահ տաժանակրութեան դատապարտէին եւ բեւեռ քէին, բեւեռային տարածութիւնն էլ շատ քիչ էր արգելելու համար, որ ես իմ նողկանքը չարտայայտէի բոլշևիկեան կառավարութեանը: Շատ ափսոս, որ բեւեռով վերջանում է աշխարհի սահմանը: Ինձ տիեզերքի անհունութիւնն է պէտք, որ անվերջ իմ գարշանքը յայտնեմ այդ կառավարութեանը ու քշուեմ հեռաւոր աքսորի...:

Վ. Թ.- Ես ուղղակի ապշում եմ, որ քեզ կենդանի են թողել եւ չեն գնդակահարել միւս գրողների պէս: Ուշի-ուշով ուսումնասիրել եմ ամբողջ գրական արխիւը: Ոչ մի ձօն Լենինին, Ստալինին: Ո՛չ լիզանք, ո՛չ քծնանք բռնակալ իշխանութեանը: Տուրքի եւ ոչ մի հնչիւն ժամանակի պարտադրանքին: Միայն ընդվզում, ըմբոստացում եւ յանդգնութիւն: Ինչպէ՞ս եկար հասար մինչեւ բրեժնեւեան ժամանակները: Ո՞րն է գաղտնիքը:

Լ.Կ. - 1935 թուականին, երբ ձերբակալեցին ու Չեկա տարան, մեղադրելով ինձ ֆաշիզմի մէջ, ասացի՝ ես ոչ թէ ֆաշիստ, այլ

ների կապոյտ ջրերին բազմած մեղմիկ հոսում, ձիւնոտ իրանն է դողում, ամբողջ սպիտակ լոյս ցանում Վահագնի վրայ, լանջն է փրփուում, դէմքից լուսնեակի լոյս հոսում, ակներից արեւալոյս ցայտում: Տարփալի Վահագն է Աստղիկին վերցնում թեւերի վրայ, պտտում բոլորակ շարքեր կազմած հանդիսականների առաջ: Հազար թմբուկների գարկերի, հազար բացականչութիւնների կանչերով ողջունում են նրանց: Վահագնի քրմապետն է բարձր ձայնով կանչում:

-Արմինա աշխարհի արքաներ, թագաւորներ, իշխաններ, աշխարհական մարդիկ, Աստղիկի ու Վահագնի հարսանեաց հանդէսի պատարագն է աւարտին հասնում, արմինների աստուածների ուղեկցութեամբ եկէ՛ք նրանց առաջնորդենք Վահագնի սենեակ:

Վահագնը Աստղիկին թեւանցուկ անում, Միհրը ձեռքին աստղ վեր պահած, Քրմուհիները Մուսասիրի լեռների լանջերին իջած մէգից հիւսած Աստղիկի շրջագոյն քղանքները պահած, իրենց աստուածների ուղեկցութեամբ գնում դէպի Վահագնի սենեակ:

Արմինա երկրի արքան, նուռերով լիքը կիթոցը ձեռքին կանգնում սենեակի դռան առաջ, կանչում:

-Վահագն ու Աստղիկ, արմին-

ֆաշիստներից էլ դէնն եմ: Որովհետեւ ֆաշիստները ազգային սոցիալիստներ են, իսկ ես առհասարակ սոցիալիզմ չեմ ընդունում, լինի դա ազգային կամ ոչ ազգային: Եթէ ծածկէի՝ անպայման կը գնդակահարուէի: Ես ուղիղ գալլի աչքերին նայեցի ու դրանով փրկեցի իմ կեանքը եւ միաժամանակ՝ պատիւը: Վ.Թ. - Է՞ր պա՛պ, պա՛պ, պատի՛ւ, ճշմարտութի՞ւն, բա ո՞ւր մնաց աշխարհի դմակը ո՞ւր մնաց դանակը: Դու էլ գիտես, թէ քո տեսակով ու քո արդարութեամբ ինչ-որ բան ես շտկել այս ծուռ աշխարհում: Նոյն աշխարհն է... նոյն գուլում ու սուտ ու փուտ աշխարհը... Լաւ ինչ որ է, վերջում, որպէս արդար ու տանջուած մարդ, այսօրուայ համար մի աղօթք արա բոլորիս համար ու ամէնքս գնանք մեր բանին:

### ԱՂՈԹՔ-ՄԱՂԹԱՆՔ

Կան ազգեր, որոնք սրտի ամբողջ խորերէն «ա՛խ» կը քաշեն՝ մեծ մարդ մը ունենալու համար, սակայն պարագան այնպէս մըն է բերեր, որ այսօր հայ ազգը կսկիծով կը տեսնե, որ պատիկ մարդ մը չունի իր մէջը: Տէր, տէր, մանրէ այդ մարդիկ՝ նոր աշխարհ դրկէ. տէր...

Տէր, չէ՞ երէկ էր, որ խօսուեցաւ «ներկայ մոմենտի» մասին. չլսեցի՞ր որքան ծանր է մեր կացութիւնը. չտեսա՞ր որ մենք անդունդի ծայրին ենք, որ մեր փրկութիւնը ճակատը պահելու մէջ է...

Տէր, դուն գինուոր դրկէ ու Հայաստանն ազատէ թշնամուց՝ ալ մի խառնուիր: Ես մարախի նման իշխաններ կը հանեմ ազատուած երկիրը կառավարելու համար, տէ՛ր... Կ'աղաչեմ, ո՛վ տէր, բան մը ասոնց գլուխէն պակսեցուր ու բան մը սրտի վրայ աւելցո՞ւր, նաեւ բան մը ասոնց արտաքինէն կտրե ու ներքինին կցան տուր: Ու եթէ կարելի է, պատիկ բան մըն ալ ասոնց էութեանէն հանէ ու մեր կարօտ...Ազգին տուր...

Ու այս բոլորն ըլլալէ ետքը, քեզի վայել է փառք, պատիւ յաւիտեանս, ամէ՛ն:

ների աշխարհում աստուածների կարգ է, որ հարս ու փեսայ իրենց սենեակ մտնելուց առաջ տան դռանը նուռեր գարկեն, որ չաւերժութիւն իջնէր նրանց տանը, որ չաւերժ լինէր իրենց սիրոյ լոյսը: Վահագնին ու Աստղիկին նուռեր հրամցնում: Արմինայի թագուհին մօտենում է Աստղիկին, ուսին երկար, բարակ հաց դնում, կանչում որ հացը հանապազորդ մտունը լինի իրենց եւ իրենց գաւակներին, մաղթում այն անպակաս լինի իրենց օճախից: Վահագն է յաղթ բազուկներով նուռը գարկում դռանը, նրա երեսից կարմիր կրակ արիւնն է հոսում, մեհեանն է դողում բարձր կանչերից: Աստղիկն է առաջ գալիս, ձեռքը բարձրացնում որ նուռը գարկի, իրանի շարժումից հացն է ուսից ընկնում, բոլորը միաբերան «Վայ» են կանչում, լուռ է մեհեանը: Արա աստուածն է առաջ գալիս, տխրադէմ հառաչում, այսպէս խօսում:

-Հարս Աստղիկ, հարսանիքի հացը ընկաւ ուսիցդ, արմինների աստուածների "բան"-ն է՝ դու ոչ հարս կը լինես եւ ոչ էլ գաւակ կը ծնանես . . . : Ողբում էր մեհեանը, ողբում էին աշխարհական մարդիկ, Արմինայի վահագնի աստուածը ու Աստղիկի դիցուհին անգաւակ էին մնալու, անգաւակ յաւերժութիւն էին դառնալու...:

**ՖՈՒԹՊՈԼ**

**ՖԻՖԱ-Ի ԱՇԽԱՐՀԻ ԱԿՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԷՎԸՐԿՐԱՆՏԵ ԵՒ ՌԱԺԱ ՅԱՂԹԵՑԻՆ**

ՖԻՖԱ-ի Աշխարհի Ակումբներու Ախոյեանութեան, որ կը շարունակուի Մարտի մէջ, քառորդ աւարտական հանգրուանին Ասիոյ ախոյեան Կունակժուի Էվըրկրանտէն յաղթեց Ափրիկէի ախոյեան Ահլին 2-0 արդիւնքով: Առաջին կիսախաղը առանց կոլերու աւարտեցաւ: Երկրորդ կիսախաղի 49րդ վայրկեանին Էվըրկրանտէի պրագիլցի յարձակող Էլքեսոն բացաւ հաշիւը, իսկ 67րդ վայրկեանին արժանթինցի կիսապաշտպան Քոնսա կրկնպատկեց զայն: Այս արդիւնքով չինական խումբը, որու մարզիչն է իտալացի Մարչելլօ Լիփիին, հասաւ կիսաւարտական հանգրուան ուր պիտի մրցի Եւրոպայի ախոյեան Պայլըն Միւնիխին հետ:

Երկրորդ մրցումին կազմակերպիչ Մարտի ախոյեան Ռաժան յաղթեց Հիւսիսային եւ Կեդրոնական Ամերիկայի ախոյեան Մեքսիքայի Մոնթերիին 2-1 արդիւնքով յետ երկարաձգումի: 25րդ վայրկեանին Շթիպի բացաւ Ռաժայի հաշիւը: Երկրորդ կիսախաղի 53րդ վայրկեանին Պասանթա հաւասարեցուց հաշիւը Սուազոյի փոխանցումէն օգտուելով: Մրցումին հիմնական ժամանակը աւարտեցաւ հաւասար արդիւնքով: Երկարաձգումի 95րդ վայրկեանին Կուեհի նշանակեց Ռաժայի երկրորդ կոլը Մուլթոուլլիէն փոխանցում ստանալով: Յաղթանակ տարաւ Ռաժան 2-1 արդիւնքով եւ հասաւ կիսաւարտական հանգրուան, ուր պիտի մրցի Հարաւային Ամերիկայի ախոյեան Աթլէթիքօ Միլներոյի հետ:

**Անգլիոյ 16-րդ հանգրուան. ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻ - ԱՐՍԵՆԱԼ 6-3**

Անգլիոյ ախոյեանութեան առաջատար Արսենալ կրեց այս տարուան իր երրորդ պարտութիւնը, երբ զիջեցաւ Մանչեսթըր Սիթիի դաշտին վրայ 6-3 արդիւնքով:

Լիվըրփուլ յաղթեց Թոթընհէմի դաշտին վրայ 5-0 արդիւնքով: Կոլերը նշանակեցին Սուաքս երկու, Հենտըրսըն,

Չելսի յաղթեց Քրիսթըլ Փալասին 2-1 արդիւնքով: Այս արդիւնքով Չելսի պահեց երրորդ դիրքը: Մանչեսթըր Եունայթըտ յաղթանակ տարաւ Ասթոն Վիլլայի դաշտին վրայ 3-0 արդիւնքով:

Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները. Մանչեսթըր Սիթի - Արսենալ 6-3, Չելսի - Քրիսթըլ Փալաս 2-1, Էվըրթըն - Ֆուլքըմ 4-1, Նիւքէսըլ Եունայթըտ - Սուոթհեմթըն 1-1, Ասթոն Վիլլա - Մանչեսթըր Եունայթըտ 0-3, Թոթընհէմ - Լիվըրփուլ 0-5

**ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ ԶԱՒԱՍԱՐԵՑԱՒ**

Սպանիոյ ախոյեանութեան առաջատար Պարսելոնա դժուարին յաղթանակ մը տարաւ Վիյարէալի վրայ 2-1 արդիւնքով:

Աթլէթիքօ Մատրիտ կը շարունակէ հետապնդել Պարսելոնան: Ան յաղթեց Վալենսիային:

Ռէալ Մատրիտ փամփոխայի մէջ հաւասարեցաւ տեղուցն Օսասունայի հետ 2-2 արդիւնքով:

Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները. Օսասունա - Ռէալ Մատրիտ 2-2, Պարսելոնա - Վիյարէալ 2-1, Մալաղա - Խետաֆէ 1-0, Ռէալ Սոսիետատ - Ռէալ Պետիտ 5-1, Սելիյա - Աթլէթիք Պիլյաօ 1-1, Աթլէթիքօ Մատրիտ - Վալենսիա 3-0,

Դասաւորում. 1-Պարսելոնա 14 յաղթ., 1 հաւ., 1 պարտ., 43 կէտ, կոլեր 44-10, 2- Աթլէթիքօ Մատրիտ 14 յ., 1 հ., 1 պ., 43 կէտ, կոլեր 43-9, 3- Ռէալ Մատրիտ 12 յ., 2 հ., 2 պ., 38 կէտ, կոլեր 46-19 Ռմբարկուներ. 1- Տիէկօ Քոսթա (Աթլէթիքօ) 17 կոլ, 2- Ռոնալտօ (Ռէալ Մատրիտ) 17 կոլ, 3- Կրիզման (Ռէալ Սոսիետատ) 10 կոլ:

**ԳԱՏՐԱԿ**

**ԵՒՐՈՊԱՅԻ ԱՐԱԳ ԳԱՏՐԱԿԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ**

Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայի մէջ աւարտած Եւրոպայի արագ ճատրակի ախոյեանութեան, որուն կը մասնակցին հայ մեծ վարպետներ Գաբրիէլ Սարգսեան, Տիգրան Լ. Պետրոսեան, Կարէն Գրիգորեան եւ Ջաւէն Անդրիասեան:

Մրցաշարքին կը մասնակցէին 432 վարպետներ: Սուր պայքարէ ետք եւ 11 հանգրուան ետք հայազգի Տիգրան Լ. Պետրոսեան գրաւեց երրորդ դիրքը եւ դարձաւ պրոնզէ մետալակիր: Վերջնական դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

1-Ռիչըրտ Ռափորթ 9.5 կէտ,

2-Վլատիմիր Մալախով 9.5 կէտ, 3-Տիգրան Լ. Պետրոսեան 9.5 կէտ, 12-Գաբրիէլ Սարգսեան 8.5 կէտ, 26-Ջաւէն Անդրիասեան 8.5 կէտ, 30-Կարէն Գրիգորեան 8 կէտ:



**ՉԵՄՓԻԸՆՁ ԼԻԿ: 1/8-ՐԴ ԶԱՆԳՐՈՒԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ**

Նիոնի մէջ տեղի ունեցաւ Չեմփիընզ Լիկի 1/8-րդ աւարտական հանգրուանի վիճակաձգութիւնը: Ստորեւ տեսնել վիճակաձգութեան արդիւնքները.

- 1-Մանչեսթըր Սիթի - Պարսելոնա
- 2-Օլիմփիաքոս - Մանչեսթըր Եունայթըտ
- 3-Միլան - Աթլէթիքօ Մատրիտ
- 4-Պայէր Լեվերքուզըն - Փարի Սէն Ժերմէն
- 5-Կալաթասէրայ - Չելսի
- 6-Շալքէ04 - Ռէալ Մատրիտ
- 7-Չելսի - Պորուսիա Տորթմունտ
- 8-Արսենալ - Պայլըն Միւնիխ:

**ԻՒՐՈՓԱ ԼԻԿ: 1/16-ՐԴ ԶԱՆԳՐՈՒԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ**

Նիոնի մէջ տեղի ունեցաւ Իւրոպա Լիկի 1/16-րդ աւարտական հանգրուանի վիճակաձգութիւնը: Ստորեւ տեսնել վիճակաձգութեան արդիւնքները.

- 1-Տնեփր - Թոթընհէմ, Ռէալ Պետիտ - Ռուպին Քազան,
  - 2-Սուանսի Սիթի - Նափոլի, Եուվենթիւս - Թրապզոնսփոր,
  - 3-Մարիպոր - Սելվիյա, Վիլթորիա Փլզէն - Շախտիոր Տոնեցք,
  - 4-Չեռնոմորէց - Օլիմփիք Լիոնէ, Լացիօ - Լիւսոկորէց,
  - 5-Էսպըրլ - Ֆիորենթինա, Ալաքս Ամսթերտամ - Սալցպըրկ,
  - 6-Մաքքապի ԹԱ - Պազըլ, Փորթօ - Այնթրախիթ Ֆրանքֆորթ,
  - 7-Անժի - Ժենք, Տինամօ Քիլե - Վալենսիա,
  - 8-ՓԱՕՔ Սալոնիք - Պենֆիքա, Սլովան Լիպեցէց - ԱՁ Ալքմար
- Երթի հանգրուանին խումբերը կը հանդիպին առաջին նշուած խումբի դաշտին վրայ:

**INNOVATIVE**  
Designs  Manufacturing, Inc.



idmifurnishings.com